# Ազգ

Azg

13 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2013 ՈՒՐԲԱԹ 153(5236)

ISSN: 1829-1651

## Հունական պաշտպանություն ցեղասպանության նոր բանաձեւի

«Հայ-հունական հետզհետե ընդլայնվող համագործակցության վառ դրսեւորումներից կարելի է համարել, որ Կոնգրեսում հելլենիստական խմբավորման համանախագահներ Մայքլ Բիլիրակիսը (հանրապետական՝ Ֆլորիդայից) եւ Կարոլին Մալոնին (դեմոկրատ՝ Նյու Յորքից) պաշտպանում են «Հայոց ցեղասպանություն: Ճշմարտություն եւ արդարություն» բանաձեւի (H. Res. 227) ընդունումը Կոնգրեսում», հաղորդում է Ամերիկայի Հայ ազգային (Հայ դատի) կոմիտեն:

«Մենք միանում ենք երկրում ապրող ամերիկահայերի եւ ամերիկահույների համագործակցությունը պաշտպանող կողմերին՝ շնորհակալություն հայտնելու կոնգրեսականներ Բիլիրակիսին եւ Մալոնիին, որ նրանք պաշտպանում են այդ բանաձեւը, որը դատապարտելով թուրքերի գործադրած ցեղասպանությունն ընդդեմ հայերի, հույների, ասորիների եւ քրիստոնյա այլ ազգությունների, միեւնույն ժամանակ ճանաչում եւ արդարություն է պահանջում», նշել է այդ առթիվ Հայ դատի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը, ավելացնելով. «Ամերիկյան իդեալների պահպանմանը նախանձախնդիր ամերիկացիների հետ հայերն ու հույները անհամբեր սպասում են այն օրվան, երբ Միացյալ Նահանգները, երբ Սպիտակ տունը ի վերջո վերջ կտա Անկարայի ժխտողական քաղաքականությունը մեղսակից լինելուն եւ կկսի Թուրքիային եւ թուրքական հասարակության առաջ մղել՝ ընդունելու պատմական ճշմարտությունը եւ կատարված ոճրագործությունների պատասխանատվությունը»:

Հիշեցնենք, որ «Ճշմարտություն եւ արդարություն» նոր բանաձեւը առաջ էին քաշել այս տարվա մայիսին կոնգրեսականներ Դեյվիդ Վալադաոն, Ադամ Շիֆը, Մայքլ Գրիմը եւ Ֆրենկ Փալոնը: Հիմնվելով նախկինում արված գրավոր հաղորդագրությունների վրա (մայիսի 28, 1951 թ., ապրիլի 22, 1981 եւ այլն), բանաձեւը կոչ է անում Մ. Նահանգների նախագահին՝ գործելու հօգուտ կայուն եւ տեւական հայ-թուրքական հարաբերությունների հաստատմանը հիմնված ցեղասպանության փաստերի եւ հետեւանքների ամբողջական ճանաչման եւ արդարացի լուծման վրա:

Հ. Ծ.

## «Լսելու եւ սովորելու» եկած ամերիկացին ու իր նախագահի ուղերձը

*Օբաման Հայաստանին ու Ադրբեջանին ուղղակի երկխոսության կոչ է արել*

Վ. ՊՈՂՈՍՅԱՆ



Հայաստանի համար բավականին հետաքրքրական, նույնիսկ բարդ մի իրավիճակում՝ տարածաշրջանային այցի շրջանակներում երեկ Երեւանում էր ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի նորանշանակ համանախագահ Ջեյմս Ուորլիքը:

«Լսելու եւ սովորելու» համար Բաքվից հետո Երեւան ժամանած դիվանագետը մինչեւ երեկվա ասուլիսը հասցրել էր հանդիպել ինչպես Հայաստանի նախագահի, այնպես էլ արտգործնախարարի հետ՝ քննարկելու բանակցային գործընթացը, անվտանգության հարցերն էլ՝ պաշտպանության նախարարության ղեկավարի հետ:

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը սեպտեմբերի 11-ին ընդունել էր Ջեյմս Ուորլիքին: Ըստ պաշտոնական հաղորդագրության՝ նախագահը շնորհավորել էր դեսպան Ուորլիքին նշանակման կապակցությամբ եւ հաջողություններ մաղթել կարեւորագույն առաքելության իրականացման գործում (հետաքրքրական ձեւակերպում այն դեպքում, երբ ակնհայտ է, թե ումից եւ որքանով է կախված դեսպանի առաքելության հնարավոր հաջողությունը-Վ.Պ.):

Սերժ Սարգսյանը բարձր է գնահատել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ռուսաստանի Դաշնության եւ Ֆրանսիայի միջնորդական ջանքերը հիմնախնդրի բացառապես խաղաղ ճանապարհով եւ միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին համապատասխան լուծելու ուղղությամբ: Հանդիպմանն անդրադարձ է եղել Լեռնային Ղարաբաղի հակամարտության բանակցային գործընթացի ներկա վիճակին եւ բանակցությունների հեռանկարին:

Ջեյմս Ուորլիքը նախագահ Սերժ Սարգսյանին է փոխանցել Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Բարաք Օբամայի ուղերձը, որի մի օրինակն էլ մինչեւ Երեւանում հայտնվելը հանձնել էր Ադրբեջանի նախագահին՝ Բաքվում նրա հետ հանդիպմանը:

Տես էջ 2

## ԱՄՆ դեսպանատան մտահոգությունը

ԱՄՆ դեսպանատան տարածած երեկվա հայտարարությունը քաղաքացիական ակտիվիստների նկատմամբ հարձակումների վերաբերյալ ժամանակային առումով կարծես մի փոքր ուշացել է ու զարմանալիորեն Մաքսային միությանը Հայաստանի անդամակցության ցանկության բարձրաձայնմանն է հաջորդել: Միգուցե չարժե այդպիսի առնչություն փնտրել այս երկու իրողությունների միջեւ, ու սա պարզ համընկնում է: Մի խոսքով՝ երեկ ԱՄՆ դեսպանատունը դատապարտել է քաղաքացիական ակտիվիստների, այդ թվում՝ ԱՄՆ քաղաքացու նկատմամբ հարձակումները, որոնք սկիզբ են առել ս.թ. օգոստոսի 22-ից: «Վերջին հարձակման ժամանակ, սեպտեմբերի 5-ին երկու քաղաքացի դաժան ծեծի են ենթարկվել, որի հետեւանքով տեղափոխվել են հիվանդանոց, որտեղ նրանցից մեկին վիրահատել են: Հարձակումներին զուգահեռ եղել են բազմաթիվ հաղորդումներ, որ ակտիվիստներին հետեւում են, սպառնում եւ ահաբեկում:

Կոչ ենք անում ՀՀ կառավարությանը շուտափույթ գործողություններ ձեռնարկել՝ դատապարտել այդ հարձակումները, անցկացնել քննություններ ու պատժել մեղավորներին: Պետությունը պետք է երաշխավորի, որ քաղաքացիները հավաքների, արտահայտվելու ու խոսքի ազատության իրենց հիմնարար իրավունքներից կարողանան օգտվել առանց հաշվեհարդարից վախի», ասված է հայտարարության մեջ:

Ս. Խ.

## Աղվան Հովսեփյանի փոխարեն՝ Երեւանի դատախազը

Երեկ լրացել է գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանի պաշտոնավարման ժամկետը: Երեկ նախագահ Սարգսյանն ընդունել եւ շնորհակալություն է հայտնել Ա. Հովսեփյանին՝ երկարամյա ծառայության եւ ներդրած ավանդի համար: Արդեն երկար ժամանակ ԶԼՄ-ները պահպանում էին ինտրիգը, թե ո՞վ է դառնալու նրանից հետո Հայաստանի գլխավոր դատախազը, եւ տարբեր անուններ շրջանառելուց հետո (Գեւորգ Կոստանյան, Դավիթ Հարությունյան, Արթուր Բաղդասարյան) եւ հավանաբար ոչ առանց ուղղորդման՝ վերջերս մամուլը նշում էր, որ ամենայն հավանականությամբ Հովսեփյանը կարողացել է իր լոբբինգն այնպես անել, որ կվերանշանակվի: Մեր աղբյուրները երեկ տեղեկացրին, որ նախկին գլխավոր դատախազը չի վերանշանակվի, եւ անգամ հայտնի է, որ նշանակվելու է Երեւան քաղաքի դատախազ Հրաչյա Բաղդալյանը: Թե որքանով է այդ լուրը համապատասխանում իրականությանը, շուտով կիմանանք, սակայն նկատենք, որ մամուլում հրապարակումներ եղել են Հովսեփյանի եւ Բաղդալյանի լարված հարաբերությունների մասին, անգամ Բաղդալյանի նկատմամբ Հովսեփյանը կարգապահական տույժեր է կիրառել, նկատողություն հայտարարել՝ դատախազին ոչ վայել պահվածքի համար: Հավանաբար՝ ժամանակին Հովսեփյանը, զգալով վտանգը, փորձել է մեկուսացնել նրան, ինչը մեր աղբյուրի համաձայն չի ստացվել, քանի որ Բաղդալյանը վայելել է բարձր հովանավորություն:

Ս. Խ.

## Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

Մեր հանդիպումը Զմմառի հայ կաթողիկե վանքի վանահայր, լիբանանահայ մտավորական Անդրանիկ Կռանյանի հետ:

1991 թ.-ին Փարիզում ֆրանսահայ գրողների ընկերակցության նախաձեռնությամբ Աբրահամ Ալիխանյանի հետ կազմակերպված հանդիպման արձանագրությունը՝ Արփի Թոթոյանի ներկայացմամբ:

Հետահայաց. Արա Գուրզադյանի 60-ամյակին. մտավորականը իր ժամանակի, մշակութային իրականության մասին:

Ռոմեն Կոզմոյանի բեյրության հուշագրության էջերից. «Դուք մեծ եք...»:

Նվիրված իռլանդացի բանաստեղծ, Նոբելյան մրցանակակիր, վերջերս կյանքին հրաժեշտ տված Շեյմուս Հինիին, ներկայացնում է Հակոբ Ծուլիկյանը:

Ավիկ Իսահակյանի «Արմենիայի զավակները» էսսեների շարքի՝ «Իմ կորցրած զինվորները» («Շիրազի եւ երեւելիների սերնդի արբանյակները») մասը:

Ս. Բ.

## Ինչպես է փոխվել գործազրկությունը Հայաստանում վերջին տարիներին

*Անցյալ տարվա 16,4 տոկոսը մեր երկրի համար ամենացածրն է եղել, բայց համարվում է բարձր ցուցանիշ*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Գործազրկությունը մեր երկրի ամենալուրջ հիմնախնդիրներից է իր բացասական հետեւանքներով՝ աղքատություն, արտագաղթ, հոգեբանական խնդիրներ եւ այլն: Բնական է, որ գործազրկության հաղթահարումը նախ եւ առաջ պայմանավորված է տնտեսական զարգացմամբ եւ նոր աշխատատեղերով: Որքա՞ն է այժմ գործազրկության մակարդակը Հայաստանում, դա տնտեսապես ակտիվ բնակչության ո՞ր մասն է կազմում, ինչպե՞ս են փոխվում գործազրկության ցուցանիշներն անցած տարիների ընթացքում:



Սովորաբար, գործազրկության մասին խոսելիս, որպես իրականությանն առավել մոտ ցուցանիշ հարկ է հիմք ընդունել տնային տնտեսությունների հետազոտության տվյալները, քանի որ դրանք հնարավորություն են տալիս պարզելու, թե աշխատունակ բնակչության որ մասն է գործազուրկ, այդ թվում նրանք, որոնք ոչ մի տեղ չեն դիմել աշխատանք գտնելու համար եւ ոչ մի տեղ գրանցված չեն որպես գործազուրկ:

Տես էջ 3

# Հովիկ Աբրահամյան. «Լավ փաստաթուղթ չեղավ՝ չենք համաձայնի»

Արդարադատության խորհրդի անդամների ընտրության փակ քվեարկությանը մասնակցած Ազգային ժողովի նախագահ **Հովիկ Աբրահամյանից** երեկ լրագրողները մի լրացուցիչ անգամ ճշտեցին նրա տեսակետը, մանավանդ՝ Հայաստանի խորհրդարանում մեր արտգործնախարարի վերջին հայտարարություններից հետո եվրոհանձնակատար Ֆյուլեն թարմացրել էր տեսակետը Մաքսային միության եւ խոր եւ համապարփակ ազատ առեւտրի գոտու անհամատեղելիության մասին: Հ. Աբրահամյանն ասում էր, թե հայկական կողմը



խոսում է Ասոցիացման պայմանագրի մասին, որը չի հակասում Մաքսային միությանը, իսկ խոր եւ համապարփակ ազատ առեւտրի գոտին բոլորովին այլ հասկացություն է. «Մենք ասում ենք, որ չի հակասում Ասոցիացման համաձայնագրին, եւ ես մեկ անգամ եւս ուզում եմ պնդել»: Իսկ եվրոպական կողմը լինելու է Հայաստանում (հավանաբար ԵՄ արտգործնախարարների ոչ պաշտոնական հանդիպումը նկատի ուներ), հանդիպելու է իշխանությունների հետ եւ այդ հանդիպումների ընթացքում որոշում կկայացնի. «Մենք շարունակելու ենք մեր համատեղ աշխատանքը Եվրոմիության հետ, շարունակելու ենք ՀՀ-ում ընթացող բարեփոխումները, շարունակելու ենք հանդիպել-բանակցել, օգտագործելու ենք Եվրոմիության այն համագործակցությունը, որը բխում Հայաստանի շահերից, եւ խորացնելու ենք եւ զարգացնելու ենք այն բարեփոխումները, որ իրականացնում ենք Եվրոմիության հետ»:

Իսկ թե ո՞ր գործոնն ազդեց, որ Մաքսային միություն մուտք գործելու վերաբերյալ հապշտապ որոշում կայացվի (համենայն դեպս՝ այդ մասին ցանկություն բարձրաձայնվի), Հ. Աբրահամյանը հակադարձեց, թե ոչ մի հապշտապ որոշում չի կայացվել, Հայաստանի նախագահը հայտնել է իր համաձայնությունն ու մտադրությունը, ինչից հետո բխում եւ ածանցվում են տարբեր գործընթացներ, երբ մոտ ապագայում երկու կառավարությունները, համապատասխան պաշտոնյաները պետք է աշխատեն միասին. «Երբ կունենանք համաձայնագրի համաձայնեցված տարբերակ, այն կբերվի Ազգային ժողով: Իսկ որ Ֆյուլեն խոսել էր Մաքսային միություն մտնելու ցանկություն հայտնած պետությունների՝ Ռուսաստանի կողմից ճնշման ենթարկվելու մասին. «Ես որեւէ ճնշման ներկա չեմ եղել եւ չեմ զգացել, որ որեւէ ճնշում կա մեր իշխանությունների վրա, որ ստիպեն անդամակցել Մաքսային միությանը, դա նաեւ ասել է հանրապետության նախագահը», վստահեցրեց ԱԺ նախագահը՝ հավելելով. «Մենք դեռ հասկանանք, Մաքսային միությանը անդամակցելը պետք է բխի Հայաստանի շահերից, մենք պետք է ընդունենք մեր շահը տնտեսական, քաղաքական եւ բոլոր առումներով, մենք դեռ չգիտենք՝ այդ շահը ո՞րն է լինելու, մենք դեռ բանակցելու ենք: Ես կոնկրետ կողմնակից եմ Մաքսային միությանը, որովհետեւ հիմքում դրված է պետության շահը»:

Իսկ թե ՀՀԿ-ականները տեղյակ չէին նախագահի հայտարարությունից՝ նա հերքեց. «Հարցը քննարկվել է, եւ մենք տվել ենք մեր համաձայնությունը, այնպես չէ, որ մենք տեղյակ չենք եղել: Ճիշտ չեն ասում այն մարդիկ, ովքեր տեղյակ են եւ ասում են՝ տեղյակ չենք: Դա ազնիվ չէ եւ արդար չէ»: Իսկ թե մեր եվրոպացի գործընկերներն ինչու են անակնկալի եկած՝ Հ. Աբրահամյանն այդպես չի կարծում՝ միշտ էլ այդ մասին խոսվել է: Իսկ որ խոր եւ համապարափակ ազատ առեւտրի գոտու եւ Մաքսային միության հետ կան հակասություններ. «Մենք այդ մասին ասել ենք իրենց. կքննարկենք՝ միգուցե հակասությունները կվերացնենք, միգուցե կլինեն այնպիսի հակասություններ, որ համատեղելի չեն լինի, ժամանակն ու գործընթացները ցույց կտան: Մենք ուզում ենք, որ մեր երկիրը զարգանա եւ գնա առաջ: Կյանքը ցույց կտա՝ սպասեք: Այդքան շուտ չի լինի, միգուցե 14 թվականին: Զարմանում եմ, որ դուք՝ լրագրողներդ, մտածում եք, թե երկրի ղեկավարները, նախագահը մի քայլ կանեն, որը չի բխում երկրի շահերից: Մենք ամեն ինչ անում ենք, որ այս երկրի շահերը պաշտպանենք: Մեր կապը Ռուսաստանի հետ է, մեր շուկան Ռուսաստանն է, կիակասի՝ չենք ստորագրի: Ինչի՞ է ձեզ թվում, որ գերի ենք, եթե լավ փաստաթուղթ չեղավ՝ մեր պետության շահերից, մենք չենք համաձայնի, ինչի մասին է խոսքը: Միգուցե ԱԺ-ն չի քվեարկի: Ամեն ինչ առջեւում է, մի շտապեք: Առայժմ մտադրություն է հայտնվել, փաստաթղթերը կլինեն, կխոսենք, փակ բան չկա ժողովրդից»:

Ինչպե՞ս է լուծվելու Արցախի ճակատագիրը, եթե Հայաստանն անդամակցի Մաքսային միությանը: Այս հարցը տրվեց տարբեր ձեւերով. «Դե, մեր հարցերը լուծենք, հետո Ղարաբաղի մասին կմտածենք», նախ ասաց Հ. Աբրահամյանը, հետո ձայնում զարմանքի շեշտադրում արեց. «Բայց Հայաստանի Հանրապետությունն է Մաքսային միության անդամակցում, ի՞նչ կապ ունի Ղարաբաղը, Ղարաբաղն անկախ պետություն է»: Հետո հակադարձեց, թե՝ ուզում եք Ղարաբաղի իշխանությունների փոխարեն կարծիք հայտնե՞մ: Իսկ մեր հրավերին, թե Ձեր պատկերացումներն ասեք, վրա բերեց.«Ես պատկերացումներով չեմ խոսում՝ հստակ-հիմնավոր»:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# «Լսելու եւ սովորելու» եկած ամերիկացին ու իր նախագահի ուղերձը

*1-ին էջից*

«Արմենպրեսը» երեկ հրապարակեց Օբամայի ուղերձի տեքստը Սարգսյանին, ըստ որի ԱՄՆ նախագահը իր նշանակած դեսպանին լիակատար աջակցություն է հայտնում, նաեւ նրա նշանակմամբ «ուժեղ ազդանշան» է տալիս ԱՄՆ «հաստատուն ու ոչ երկիմաստ» պատրաստակամության մասին՝ աջակցելու կողմերին հասնելու ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը: «Հույս ունեմ, որ դեսպան Ուորլիքի դիվանագիտական հարուստ փորձն ու առաջընթաց ունենալու ձեր կառավարության ցանկությունը նոր էներգիա կհաղորդեն համանախագահությանը եւ խաղաղ գործընթացին», նշել է Օբաման Սարգսյանին ուղղված նամակում:

Օբաման Հայաստանի նախագահին կոչ է արել «օգտագործել եկող ամիսներին Ադրբեջանի նախագահի հետ ուղղակի երկխոսության հնարավորությունները, նաեւ շահավետ օգտագործել համանախագահների ժամանակն ու փորձառությունը՝ հաղթահարելու բանակցություններում առկա փակուղին»: «Արդեն հստակեցված փոխզիջումներով հանդերձ՝ նորովի ջանքերի ժամանակն է տարածաշրջանին խաղաղություն բերելու համար», եզրափակել է իր նամակը ԱՄՆ նախագահը:

Նոր ջանքերի, նոր ժամանակների մասին շեշտադրումները թեեւ նոր չեն, սակայն ներկա դրությամբ այսպիսի ձեւակերպումները համանախագահող Միացյալ Նահանգների կողմից, այն էլ բանակցությունների առկա վիճակը փակուղի որակելով, կարող են նշանակել, որ ինչ-որ նախաձեռնությունների ականատես կլինենք շուտով: Ավելին՝ այդ նախաձեռնությունները ինչ-որ նոր բան են ենթադրում, որը ներկա դրությամբ դեռեւս չի հստակեցվում:

Հստակության մասին չի հաղորդվում նաեւ սեպտեմբերի 10-ին Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի նորանշանակ համանախագահ դեսպան Ջեյմս Ուորլիքի հանդիպման հաղորդագրության մեջ:

Էդվարդ Նալբանդյանն ընդգծել է, որ Հայաստանը՝ համանախագահ երկրների հետ, միասնական եւ վճռական է հասնելու հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորմանը՝ Մինսկի խմբի համանախագահների կողմից ներկայացված մեկ ամբողջություն կազմող սկզբունքների եւ տարրերի հիման վրա:

Հստակություն նամակի բովանդակության հարցում, թե ինչ էր ուզում ասել Օբաման, չմտցրեց ինքը՝ դեսպան Ուորլիքը երեկվա երեւանյան ասուլիսում, միայն ասելով, թե նոր առաջարկներ չի բերել: Ամերիկացի դիվանագետը նախ հայտարարեց, ավելի շուտ՝ կրկնեց, թե «լսելու եւ սովորելու» է եկել տարածաշրջան: Մնացյալն առանձնակի նորություն չէր այն համատեքստում, թե հակամարտությունն արդեն 20 տարվա պատմություն ունի, խաղաղությունն էլ տարածաշրջանի անվտանգության ու կայունության հիմք կլինի:

Որեւէ մեկը ցայսօր չի վիճարկել ասվածները, հատկապես որ տարածաշրջանում եվրոպական ու եվրասիական ուղղությունների հակադրման ֆոնին անգամ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրները, ի դեմս Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի, պատրաստակամ են շարունակելու բանակցային գործընթացում իրենց միջնորդական դերակատարությունը: Դրա շրջանակներում էլ, թերեւս, միայնակ տարածաշրջան այցից հետո Ուորլիքը գալու է իր գործընկերների՝ ռուսաստանցի եւ ֆրանսիացի համանախագահների հետ:

Հիշեցնենք, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի նոր ամերիկացի համանախագահը նշանակվել էր օգոստոսի 5-ին, ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրիի տեղեկացմամբ, թե դեսպանն իր գործառույթների կատարմանը կանցնի սեպտեմբերին: Աֆղանստանում եւ Պակիստանում ԱՄՆ նախագահի հատուկ ներկայացուցչի տեղակալի, վերջին շրջանում Բուլղարիայում ԱՄՆ դեսպանի պաշտոնը զբաղեցրած Ուորլիքը փոխարինեց Ռոբերտ Բրադկեին, որին մի քանի ամսով փոխարինում էր Յան Կելին:

# Քաղաքականը տնտեսականից Եվրոմիությունը անջատել չի կարող

«ԵՄ հետեւողական դիրքորոշումն այն է, որ քաղաքական ասոցիացումը եւ տնտեսական ինտեգրացումը պետք է առաջ ընթանան միաժամանակ՝ հանդիսանալով Ասոցիացման համաձայնագրի անբաժանելի մասերը: Այդ պատճառով, մենք չենք կարող առանձնացնել համաձայնագրի այս երկու կարեւորագույն բաղադրիչները», Մեդիամաքսին տված հարցազրույցում հայտարարել է Եվրոմիության ընդլայնման եւ հարեւանության քաղաքականության հարցերով հանձնակատար **Շտեֆան Ֆյուլեն**:

Այսպիսի արձագանք է տվել Ֆյուլեն այն հարցին, թե արդյոք կա՞ հնարավորություն, որ Հայաստանը եւ ԵՄ-ը Վիլնյուսի գագաթաժողովում նախաստորագրեն Ասոցիացման համաձայնագիրը (առանց խոր եւ համապարփակ ազատ առեւտրի գոտու):

Արդյո՞ք ԵՄ-ը նախապես տեղեկացված էր Հայաստանի կողմից Մաքսային միությանը միանալու տարբերակի դիտարկման մասին հարցին Ֆյուլեն պատասխանել է, թե ԵՄ-ը այդ մասին ուղղակիորեն տեղեկացվել է միայն օգոստոսի 31-ին: Հուլիսին Երեւան կատարած իր այցի ընթացքում այդ հարցը քննարկումների մաս չի կազմել:

Ռուսաստանի կողմից հնարավոր ճնշումների մասով էլ ԵՄ հանձնակատարը շեշտել է, որ ԵՄ-ը հարգում է իր գործընկերների ինքնիշխան որոշումները: «Նրանք ազատ են ընտրելու ինտեգրացման եւ համագործակցության իրենց նախընտրելի ձեւաչափերը», ասել է Ֆյուլեն՝ ավելացնելով. «Միեւնույն ժամանակ, մենք ափսոսում ենք Ռուսաստանի կողմից արված հայտարարությունների եւ Ասոցիացման համաձայնագրի ԽՀԱԱԳ հարցում որոշ հարեւան երկրների նկատմամբ գործադրված ճնշման առնչությամբ: Մենք աջակցել եւ աջակցելու ենք մեր գործընկերներին, որպեսզի նրանք ինքնուրույն ընտրություն կատարեն»:

Ինչ վերաբերում է մեկնաբանությանը, թե Հայաստանի նախագահի որոշման վրա ազդած առանցքային գործոններից մեկը անվտանգության խնդիրն է, եւ որ ԼՂ հակամարտության եւ հայ-թուրքական հարաբերությունների չլուծված խնդիրները Հայաստանին մեծ կախվածության մեջ են դնում Ռուսաստանից, Եվրոմիության հանձնակատարը նշել է. «ԵՄ-ը ակտիվորեն սատարում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերին, որոնք ուղղված են ԼՂ հակամարտության կարգավորմանը: ԵՄ-ը նաեւ սատարում է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը առանց նախապայմանների»:

Վ. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

“AZG” Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Փակ շուկան՝ դասական օրինակ

## *20 կամարից 10-ի փոխարեն հարկեր են կառուցված*

Ճարտարապետները, Փակ շուկայի ճակատագրով մտահոգ քաղաքացիներն այլեւս չեն դիմում շուկայի սեփականատեր Սամվել Ալեքսանյանին, դիմում են կառավարությանը: Ալեքսանյանի հարցազրույցներից հասկացել են՝ մարդը չի հասկանում՝ ինչ կառույց է, ինչպիսի նշանակություն ունի, եւ չի հասկանում, որ պետք է աշխատեցնի առանց այն քանդելու: Թեպետ ունենք կառավարություն, գերատեսչություններ, որոնք, ըստ օրենքի, պետք է պաշտպանեն հուշարձանները, սակայն ոչինչ էլ չի արվում, եւ մայրաքաղաքն անընդհատ կորցնում է իր հուշարձանները: «Գործարարը մեղավոր չէ, նա գնել է, իր տարածքն է, իրեն թվում է՝ ինչ ուզում է, կարող է անել, բայց կառավարությունը նրա համար է, որ բռնի գործարարի ձեռքն ու թույլ չտա օրենք խախտել: Այլ երկրներում, երբ գերատեսչության ղեկավարները համաձայնում են, որ իրենց բոլոր ջանքերն ի զուր են անցել, թողնում են պաշտոնը՝ ի նշան բողոքի: Ցավոք, այստեղ նման բան հնարավոր չէ», ասում է ճարտարապետների միության նախագահ **Մկրտիչ Մինասյանը**:



«Կատարվածի ամենամեծ մեղավորը մշակույթի նախարարությունն է», ասում է ճարտարապետ **Ալեքսանդր Բադալյանը**: «Չպետք է թույլ տրվեր, որ զրո նիշից ներքեւ շինարարություն իրականացվեր ու շինհրապարակ տեխնիկա մտներ: Դա ազատեց գործարարի ձեռքերն, ու նա սկսեց շինարարությունը», ասում են ճարտարապետները՝ հավելելով, որ անզոր էին պայքարել օլիգարխի դեմ, անզոր էին նաեւ գերատեսչությունների ամենաթողության պատճառով, օրենքները ծառայեցվեցին ի շահ գործարարի:

Փակ շուկան կարելի է դասական օրինակ համարել, թե ինչպես է օրենքը խախտվում, գերատեսչությունները երբեմն կույր, խուլ ու համր են ձեւանում ի շահ օլիգարխի: Փակ շուկայի համար պայքարը երկու տարվա կյանք ունի: Ամեն ինչ սկսվեց, երբ մշակույթի նախարարությունը դրական եզրակացություն տվեց ու շուկայի տարածք բուլդոզերներ մտան: Փլվեց առաջին կամարը, հետո՝ երկրորդը, երրորդը: Այսօր շուկայի զարդը համարվող 20 կամարից 10 չկան: Դրանց փոխարեն գործարարը հարկեր է կառուցել: Մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը այդպես էլ որեւէ պարզաբանում չտվեց, թե ինչու է նման հակամշակութային որոշումներ ընդունում: Նախարարին խոսելիս կարելի է տեսնել միայն զանազան ու երբեմն անիմաստ ու փողերի լվացման համար հրաշալի հիմք հանդիսացող փառատոների բացման կամ փակման արարողությունների ժամանակ: Սակայն այդ ժամանակ էլ նրան անհնար էր լինում հարց ուղղել. կամ նա շտապում էր, կամ էլ կարճ պատասխանում, որ ամեն ինչ լավ է լինելու: Փաստորեն, ըստ մշակույթի նախարարի, Փակ շուկայի լավ լինելն այսօրվա տեսքն է, առանց կամարների, զարդաքանդակների, «եվրոռեմոնտ» սեւ ապակիներով: Փաստորեն, երկու տարի շարունակ մշակույթի նախարարությունը օրենքներ է խախտել, իր լռությամբ նպաստել շուկայի աղճատմանն ու պաշտպանել օլիգարխի շահերը:

Օլիգարխի շահերն է պաշտպանել եւ երկու տարի շարունակ օրենք խախտել նաեւ քաղաքապետարանը: Նրանք հայտարարում էին, թե մշակույթի նախարարությունը դրական եզրակացություն է տվել, մենք էլ թույլ ենք տվել շինարարություն: Քաղաքապետարանի աշխատակիցները, ցավոք, երկու տարի շարունակ տեսողական լուրջ պրոբլեմներ ունեին եւ չէին նկատում, որ Ալեքսանյանը կատարում է ավելին, քան թույլ է տրված փաստաթղթով: Շուկայի աղճատումը վերջին պահին նկատեց Նարեկ Սարգսյանը, բայց միայն այն ժամանակ, երբ արդեն մայրաքաղաքի էքս ճարտարապետն էր ու անցել էր այլ պաշտոնի:

Հույսը կորցնելով, որ գերատեսչությունները երբեւէ դեմ դուրս կգան օլիգարխին, մի խումբ ճարտարապետներ դիմեցին գլխավոր դատախազություն եւ հայց ներկայացրին ապօրինության եւ շինարարական նորմերի խախտման համար: Պարզվեց, տեսողական լուրջ պրոբլեմ ունեն նաեւ դատախազությունում: Նրանց տարած հաղորդագրության մեջ ասված է, որ իրենք ուսումնասիրել են տարածքն ու որեւէ խախտում չեն նկատել: Խախտում չնկատեցին նաեւ ոստիկանները: Ստացվեց, որ չորս գերատեսչություն երկու տարի շարունակ աշխատել է ոչ թե հանուն հասարակության կամ օրենքի, այլ հանուն Սամվել Ալեքսանյանի: Այս հարցում կարելի է գնալ իրավական ճանապարհով եւ դասական հայց ներկայացնել վերոնշյալ չորս կառույցների դեմ, սակայն կռահելի է, թե դատարանը ինչ վճիռ կկայացնի:

Ի դեպ, հեռուստաընկերություններով արդեն պտտվում են գովազդային հոլովակներ, որ նորաբաց «Yerevan city» սուպերմարկետը աշխատանքի է հրավիրում վաճառողների: Ամենայն հավանականությամբ մինչեւ ամսվա վերջ Փակ շուկայի «Երեւան սիթի»-ն կբացվի:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Ինչպես է փոխվել գործազրկությունը Հայաստանում վերջին տարիներին

*1-ին էջից*

Այլ մեթոդաբանությամբ գործազրկության իրական պատկերը չի երեւում: Այսպիսով, ինչպե՞ս է փոխվել գործազրկության ցուցանիշն ըստ տարիների 2001 թվականից: Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալներում ներկայացված է գործազրկության մակարդակը՝ համադրված տնտեսապես ակտիվ բնակչության թվի հետ.

2012 թ.՝ 16,4 տոկոս
2011 թ.՝ 18,4 տոկոս
2010 թ.՝ 19 տոկոս
2009 թ.՝ 18,7 տոկոս
2008 թ.՝ 16,4 տոկոս
2007 թ.՝ 28,7 տոկոս
2006 թ.՝ 27,8 տոկոս
2005 թ.՝ 31,2 տոկոս
2004 թ.՝ 31,6 տոկոս
2003 թ.՝ 31,2 տոկոս
2002 թ.՝ 35,3 տոկոս
2001 թ.՝ 38,4 տոկոս

Մինչեւ 2001 թվականը վիճակագրական տվյալներ չկան, բայց գաղտնիք չէ, թե ինչպիսին էր զբաղվածության իրավիճակը Հայաստանում 90-ականների հատկապես առաջին կեսին, երբ, Համաշխարհային բանկի գնահատականներով, 600 հազար աշխատատեղ փակվեց, որտեղ ներգրավված էր տնտեսապես ակտիվ բնակչության առնվազն կեսը: 90-ականների վերջերից միայն Հայաստանի տնտեսությունը փլուզումից հետո, սկսեց դանդաղորեն վերականգնվել: Այդուհանդերձ, ինչպես երեւում է ցուցանիշներից, 2001-ին տնտեսապես ակտիվ բնակչության ավելի քան 38 տոկոսը գործազուրկ էր: Հաջորդ երկու տարիներին գործազրկությունը Հայաստանում նվազեց 3-ական տոկոսով, բայց 2003-2005-ին պահպանվեց նույն մակարդակի վրա: Հաջորդող տարիներին գործազրկության մակարդակը դարձյալ սկսեց նվազել, ինչը պայմանավորված էր հիմնականում շինարարության՝ պետական եւ մասնավոր, բուռն զարգացմամբ: 2008-ին գործազրկությունը Հայաստանում կազմեց 16,4 տոկոս:

Բնական է, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը չէր կարող չազդել նաեւ գործազրկության ցուցանիշների վրա: Ինչի հետեւանքով 2009-ին այն կրկին ավելացավ, հասնելով 18,7 տոկոսի: 2010-ին եւ 2011-ին էլ այս ցուցանիշը էական փոփոխություններ չկրեց: 2012-ին միայն գործազրկության մակարդակը վերադարձավ անցած տարիների լավագույն ցուցանիշի՝ 2008-ին գրանցված 16,4 տոկոսի: Սակայն, ի տարբերություն 2008-ի, այս անգամ ավելացել էր արդյունաբերության եւ գյուղատնտեսության մեջ ներգրավվածների թիվը: Թվային առումով սա նշանակում է, որ տնտեսապես ակտիվ, այսինքն՝ աշխատունակ մոտ 1,2 մլն բնակչությունից ավելի քան 62 հազարը գործազուրկ է: Համեմատության համար նշենք, որ Եվրոմիության երկրներում գործազրկության միջին մակարդակը 10 տոկոսն է, ինչը համարվում է բարձր ցուցանիշ եւ 2008-2009-ի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետեւանք: Միաժամանակ, տեղեկացնենք, որ ԵՄ որոշ երկրներում՝ Իսպանիա, Հունաստան, գործազրկության ցուցանիշը նույն մակարդակի վրա է եւ անգամ մի փոքր էլ բարձր (մոտ 17 տոկոս), ինչ մեզ մոտ: Պարզապես տարբերությունն այն է, որ եթե այդ երկրներում գործազրկության նպաստը մի քանի հարյուր եվրո է, ապա մեզ մոտ՝ 18 հազար դրամ:

Այսպիսով, փաստենք, անկախ նրանից, որ անցյալ տարի երկրորդ անգամ ունեցանք անկախության տարիների ընթացքում գործազրկության ամենացածր մակարդակը, դրանով հանդերձ, այն շարունակվում է մնալ շատ բարձր: Հետեւաբար, նոր աշխատատեղերի ստեղծման համար նպաստավոր պայմաններ ապահովելը Հայաստանի կառավարության առաջնահերթություններից մեկը պետք է մնա:

**ՀՕԳՈՒՏ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ**

# Հայաստանի դեմոկրատական կուսակցության հայտարարությունը

**«Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը, հավատարիմ իր ծրագրային սկզբունքներին, գնահատելով Հայաստանի Հանրապետության խոր եւ համապարփակ, բազմաբովանդակ կապերը Ռուսաստանի Դաշնության հետ, բացարձակ ձեռքբերում համարելով ազգային-պետական անվտանգության համակարգի գոյությունը, կառուցված Ռուսաստանի եւ ՀԱՊԿ անդամ մյուս պետությունների հետ միասին, միանգամայն ճիշտ եւ վստահելի դաշնակցին համազոր որոշում է համարում Մաքսային միությանը միանալու ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հայտարարությունը:**

**Մաքսային միության շրջանակներում համագործակցության խորացումը բխում է մեր երկրի թե՛ տնտեսական եւ թե՛ սոցիալական զարգացման շահերից, հնարավորություն ընձեռելով հիմնադիրներից մեկը դառնալու ապագա Եվրասիական միության կազմավորման գործընթացում:**

**Գտնում ենք, որ Հայաստանի իշխանությունները Մաքսային միության անդամ պետությունների հետ բանակցություններում հետեւողականորեն պետք է ներկայացնեն ընդհանուր սահմանի բացակայության պայմաններում համապատասխան փոխշահավետ համագործակցության մեխանիզմների ստեղծումը՝ որեւէ պարագայում երբեւէ չանտեսելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենսական շահերը, քանի որ Արցախի տնտեսական կառույցները փաստացի գործում են ՀՀ մաքսային տարածքում:**

**ՀՀ արտաքին քաղաքական վեկտորի վերահաստատման գործընթացում ոչ պակաս նշանակություն ունի ներկա աշխարհաքաղաքական խառնաշփոթ իրավիճակի մշուշոտ հեռանկարը, ինչը ուղղակի եւ անուղղակի ազդեցություն է ունենալու մեր երկրի անվտանգության թե՛ ամրապնդման, թե՛ թուլացման գործում:**

**Միաժամանակ գտնում ենք, Մաքսային միությանը միանալը ամենեւին էլ չի խոչընդոտում մյուս երկրների եւ միությունների հետ համագործակցությանը: Եթե Եվրոմիության ներկայացուցիչները անկեղծ են իրենց հայտարարություններում, ապա Հայաստանը կարող է շարունակել համագործակցությունը Ասոցիացման պայմանագրի շրջանակներում եւ յուրահատուկ կամուրջ հանդիսանալ ԵՄ եւ Մաքսային միության եւ ապագա Եվրասիական միության անդամ երկրների միջեւ: Մի բան, որը որոշակիորեն կբացառեր հակամարտության սաղմերի գոյավորումը: Առավել եւս, որ արդի իրավիճակում անհրաժեշտ է լինել այն ճամբարում, որտեղից խաղաղությանը, մարդու եւ ժողովուրդների իրավունքների իրական պաշտպանությանը, նրանց ինքնության պահպանմանը եւ զարգացմանն ուղղված համապատասխան քայլեր են ձեռնարկվում:**

Հայաստանի դեմոկրատական կուսակցության հանրապետական խորհուրդ

Երեւան, 11.09.2013թ.

# Հայ-թուրքական հասարակական երկխոսությունը պաշտոնական հարաբերությունների բացակայության պայմաններում

*Այս վերլուծականը գրելու համար երկու առիթ կար: Կիրակի օրը Աղթամարի Սուրբ Խաչ վանքում հավաքված հարյուրավոր հայերի, այդ թվում՝ հայաստանցիների մասնակցությամբ պատարագ մատուցվեց եւ մկրտություններ տեղի ունեցան: Երրորդ անգամ լինելով, հայկական ծեսով այս արարողությունները սկսում են դառնալ ավանդական: Երկրորդ առիթը հայ մտավորականների խմբի այցն էր Ստամբուլ, որտեղ նրանք թուրք խոշորագույն գրողներից մեկին՝ Յաշար Քեմալին հանձնեցին Հայաստանի մշակույթի նախարարության «Գրիգոր Նարեկացի» հուշամեդալը: Տարբեր առիթներով գրվել է, որ 90-ամյա Յաշար Քեմալը ժամանակին ուղղակի խանգարել է քուրդ քանդարարներին՝ ավերելու Աղթամարի Սուրբ Խաչ վանքը: Այս պատմությունը թուրքահայերը լավ գիտեն, եւ Հայաստանի կառավարության յուրօրինակ շնորհակալությունը գալիս է մի անգամ եւս խորհրդանշելու, որ Թուրքիայում բոլորը չեն ջարդարար, բոլորը չեն հայատյաց:*

*Այս երկու իրադարձությունները մեկնաբանելու հանգամանքով սկսեցինք ուսումնասիրել հայ-թուրքական ոչ պաշտոնական առնչությունների վիճակն այսօր, երբ հայ-թուրքական պաշտոնական երկխոսությունը սառեցված է, փակ է հայ-թուրքական սահմանը եւ հաստատված չեն երկկողմ հարաբերություններ: Միեւնույն ժամանակ Թուրքիայից մեզ են հասնում տեղեկություններ, որ Արեւմտյան Հայաստանի եւ ավելի լայն իմաստով Անատոլիայի տարբեր մասերում գնալով ավելի շատ մարդիկ փորձում են վերագտնել իրենց ինքնությունը, գտնում եւ վեր են հանում իրենց ազգային արմատները, դիմում են Պոլսի հայոց պատրիարքությանը հայ քրիստոնեական ծեսով մկրտվելու խնդրանքով: Սրանք աննախադեպ իրողություններ են, որոնցում զգացվում է Թուրքիայում նոր ժամանակների շունչը:*

## Քաղաքացիական հասարակությունների միջեւ շփման ու երկխոսության անհրաժեշտությունը

Ստացվել է այնպես, որ այսօր հայ-թուրքական հասարակական երկխոսության ամենաակտիվ ջատագովները «Արեւմտահայոց ազգային համագումար» միջազգային կազմակերպության Ազգային խորհրդի անդամներն են: Նրանցից երկուսի հետ ես երկար ու շատ հետաքրքրական զրույց ունեցա: Ազգային ժողովի պատգամավոր, ԲՀԿ-ական **Արագած Ախոյանը** եւ պատմական գիտությունների դոկտոր **Վահան Մելիքյանը** մաս են կազմել հայ մտավորականների վերոհիշյալ պատվիրակությանը: Եթե լինենք ավելի բծախնդիր, ապա պետք է նշենք, որ հենց Արեւմտահայոց ազգային համագումարի Ազգային խորհրդի միջնորդությամբ է Հայաստանի մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը Յաշար Քեմալին պարգեւատրել «Գրիգոր Նարեկացի» հուշամեդալով: Զրուցակիցներս պատմում են, որ Յաշար Քեմալի բնակարանում հուշամեդալը հանձնելու արարողությունը թուրքական ԶԼՄ-ներում աննախադեպ իրարանցում էր առաջացրել: 26 լրատվամիջոցներ երկու հերթով մտել են լուսաբանելու: Յաշար Քեմալի ծանոթ պոլսահայերն ու թուրքական, քրդական եւ այլ ծագում ունեցող բարեկամների ու ընկերների մասնակցությամբ անցած մտքերի փոխանակություններն ու զրույցները աննախադեպ բաց են եղել եւ անկեղծ: Արագած Ախոյանն այնտեղ ասել է. «Ցանկացած հանրության կարելի է տանել դեպի սոցիալական ամեն տեսակի իրավիճակներ: Մարդկության պատմության մեջ քիչ չեն կոտորածները, քիչ չեն անհավատալի ոճրագործությունները անհատների, ժողովուրդների մակարդակով: Մարդու անասնական բնազդների մասին բոլորս լավ գիտենք: Սակայն մարդկության առաջընթացը, համաշխարհային քաղաքակրթության զարգացումը բոլոր ժամանակներում տեղի է ունեցել լուսավոր անհատների ջանքերով, նրանց լուսավոր ինքնության շնորհիվ... Մեր հարգանքը Յաշար Քեմալի նկատմամբ կապված չէ միայն Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու փրկության փաստի հետ: Յաշար Քեմալ մտավորական, քաղաքացիական գործիչը խորհրդանշում է նաեւ Թուրքիայում ձեւավորվող քաղաքացիական խղճի, արդար գիտակցության, ժխտողականությունն ու մեղքի շարունակականությունը մերժող հասարակության կազմավորման փաստը: Այսօր մենք փորձում ենք Թուրքիայում հետեւել մշակույթի, մարդու իրավունքների, ժողովուրդների հավասարության, ազատ հասարակության ճանապարհով ընթացող գործիչներին ու կազմակերպություններին, նրանց հետ համատեղ կյանքի կոչելու հարյուր տարի առաջ հայերի նկատմամբ իրականացված ոճրագործության հետեւանքների վերացման առաքելությունը»:

Ուշագրավ է, որ թե՛ այդ հանդիպումների ընթացքում եւ թե՛ մեզ հասնող այլ բազմաթիվ տեղեկություններով՝ Թուրքիայի ազատ մտածող մտավորականության շրջանում սովորական է դարձել 1915 թվականի իրադարձությունները Ցեղասպանություն կոչելը, եւ դա տեղի է ունեցել Ստամբուլի Թաքսիմ հրապարակում չորս տարի առաջ տեղի ունեցած ոչ այնքան բազմամարդ, բայց զգայացունց ցույցից հետո, երբ տասնամյակներ շարունակ պետական մեքենայի կողմից տաբու դարձած արգելքը՝ այդ բառով արեւմտահայերի հետ պատահածն անվանելը, ըստ էության մեկ երեկոյի ընթացքում հօդս ցնդեց: Իմ զրուցակիցներն ասում էին, որ այսօր Թուրքիայում բարձր որակի եւ շատ անկախ մտածող մտավորականության շերտ գոյություն ունի: Այս մարդիկ փորձում են իմաստավորել եւ վերագնահատել սեփական անցյալի պատմությունը եւ դա անում են համարձակորեն իրերն իրենց անունով կոչելու միջոցով: Շատ ուշագրավ է, որ անձնական զրույցների ժամանակ շատ շատերն են ընդունում Հայոց ցեղասպանության փաստը եւ մտածում, որ այն ճանաչելու դեպքում գալու է հետեւանքների վերացման եւ հատուցման հարցերի մասին խոսելու ժամանակը:

Լինենք իրատես: Երեք տարի առաջ Թուրքիայում անցկացված հասարակական կարծիքի մի հարցմամբ ամենաչսիրված ժողովուրդներ ճանաչվեցին հայերն ու հրեաները: Թուրքիան ավանդական հայատյացության երկիր է, եւ դա նույնպես տասնամյակներ շարունակ քաջ հայտնի է եղել բոլոր հետազոտողներին: Սակայն վերջին տարիներին Թուրքիայում ընթացող արագընթաց քաղաքական իրողությունները մի փոքր փոխել են նաեւ այս իրողությունը: Պայմանականորեն հասարակությունը բաժանելով ավելի ազատ մտածողների եւ ազգայնականների՝ մասնագետներն արձանագրում են, որ առաջինների թվի մեծացումն է հնարավոր դարձրել Հայկական հարցի եւ 1915 թվականի իրողությունների մասին խոսելը առանց տաբուների:

2009 թվականին Անադոլու պետական լրատվական գործակալությունը հայտարարել է, որ Անատոլիայում (հիմնականում Արեւմտյան Հայաստանում) մոտ կես միլիոն մարդ հայկական ծագում ունի: Մինչեւ անցյալ տարի մոտավորապես ուսումնասիրելով սեփական փնտրտուքի հարցերը՝ փորձագետներն ասում էին, որ իրականում այսօր քուրդ կամ թուրք իրենց համարող մարդկանցից ավելի քան մեկ միլիոնը ունի հայկական ծագում: Մեր հանդիպման ժամանակ Արագած Ախոյանն ասաց, որ իր թուրք եւ քուրդ զրուցակիցները տարբեր առիթներով ասել են, որ իրականում երկուսից մինչեւ չորս միլիոն մարդ իրենց ծագումով հայ են համարում, սակայն դավանում են մահմեդականություն եւ, իհարկե, չեն խոսում հայերեն: Դոկտոր Վահան Մելիքյանի կարծիքով՝ շատ կարեւոր է, որ ստեղծված հնարավորությունների պարագայում մարդիկ սկսել են պարզել իրենց ինքնությունը, եւ շատ կարեւոր է, որ նրանք սկսել են իրենց հայ համարել, որովհետեւ թե՛ հայերեն խոսելը, թե՛ քրիստոնեությանը վերադառնալը շուտ կամ ուշ կարելի կլինի իրականություն դարձնել, իսկ ինքնության փնտրտուքը մարդու ներաշխարհում շատ խոր եւ շատ կարեւոր գործընթաց է: Բարոյահոգեբանական ոլորտին եւ աշխարհաճանաչողությանն առնչվող այս հարցերը այսօրվա Թուրքիայում սկսել են դիտարկվել նաեւ որպես քաղաքական կատեգորիաներ: Ազգությամբ քուրդ քաղաքական գործիչները թե՛ արեւելքի քրդաբնակ քաղաքներում եւ թե՛ Ստամբուլի ու Անկարայի քաղաքական շրջանակներում սկսել են խոսել, որ Թուրքիայում պետք է վերականգնել ժողովուրդների բարի կապերը եւ ընդունել հարյուրամյակ առաջ կատարած ոճրագործությունները: Արագած Ախոյանը իր ելույթներից մեկում ասել է. «Մեծ եղեռնի ժամանակ հայերն այս երկրից տարան իրենց երգերն ու պարերը, մշակույթն ու տարազը, լեզուն ու հավատքը: Նրանք այս երկրում թողեցին իրենց գույքը, իրենց տներն ու ունեցվածքը»: Արեւմտահայոց ազգային համագումարում կարծում են, որ Հայոց ցեղասպանության փաստի ճանաչման պահանջը առաջ մղելուն զուգահեռ պետք է բարձրացնել ունեզրկված արեւմտահայերի նյութական ու բարոյական իրավունքների վերականգնման հարցը:

## Հայկական պահանջները որպես հասարակական երկխոսության թեմա

Վերջերս սփյուռքի նախարարության հրավիրած Հայ իրավաբանների համահայկական ֆորումում կարծես լիակատար փոխըմբռնում կար այն հարցում, որ աշխարհի հայ իրավաբանները պետք է միասնական ջանքերով առաջ մղեն Ցեղասպանության զոհ դարձած արեւմտահայերի իրավահաջորդների իրավունքները վերականգնելու հարցը: Հիշեցնենք, որ վերջին տարիներին Հայաստանում եւ Սփյուռքում ընթացող բազմաթիվ քննարկումներում դեռեւս համընդհանուր կոնսենսուս ձեռք չի բերվել այն հարցում, թե Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության փաստը պաշտոնապես ճանաչելու դեպքում ի՞նչ ենք հասկանալու դրա հետեւանքների վերացում ասելով: Արժե հիշել, որ 1919 թվականի Փարիզի կոնֆերանսին հայկական երկու պատվիրակությունների կազմած պահանջները ցեղասպանված արեւմտահայերի կորուստները գնահատում էին 20 միլիարդ ոսկե ֆրանսիական ֆրանկ ծավալով: Համոզված ենք, որ Հայաստանի եւ սփյուռքի քաղաքական շրջանակների բազմաձայն քննարկումների թեմաներից մեկն էլ պետք է լինի հայկական պահանջատիրության ճշգրիտ, ժամանակակից միջազգային իրավունքի վրա հիմնված պահանջների ձեւակերպումը: Արեւմտահայոց ազգային համագումարում, օրինակ, կարծում են, որ հայ-թուրքական ոչ ֆորմալ հասարակական երկխոսության թեմաներից մեկը պետք է դառնա մի շատ պարզ եւ ժամանակակից աշխարհում բոլորի կողմից հասկանալի պահանջ. թույլ տալ արեւմտահայերի սերունդներին վերադառնալ նախնիների հայրենիք, գույք ու գործ ունենալ այնտեղ: Դրա առաջին օրինակները կարող են շատ դրական ազդեցություն ունենալ եւ բազմաթիվ հետեւորդներ: Բայց դրա համար պետք են թուրքական հասարակության կողմից բարյացակամություն եւ առանց ատելության հարցին մոտենալու ունակություն, իսկ թուրքական պետության կողմից՝ հատուցման պատրաստակամություն եւ անվտանգության երաշխավորություն:

Մենք գիտենք, որ հայ իրականության մեջ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը առաջ մղելու եւ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության փաստը ճանաչվելու հարցում կան տարբեր մոտեցումներ: Այդ մոտեցումները բազմաթիվ են, եւ դրանց յուրաքանչյուրի կրողները ունեն բազմաթիվ փաստարկներ: Բայց Թուրքիայի այսօրվա քաղաքայան շրջանակների հետ ամենաշատ շփվող մարդիկ փաստորեն Արեւմտահայոց ազգային համագումարի անդամներն են: Նրանք նույնիսկ ունեն Ստամբուլում ներկայացուցչություն բացելու ծրագիր՝ Փարիզում արդեն ստեղծված կենտրոնակայանի հետ աշխատելու համար: Վահան Մելիքյանը կարծում է, որ ընձեռված պայմաններում, հայ-թուրքական պաշտոնական հարաբերությունների բացակայության պայմաններում հատուկ իմաստ է ստանում հայ-թուրքական երկխոսությունը քաղաքացիական հասարակությունների մակարդակով՝ դրանցում ընդգրկելով մտավորականության, երիտասարդության, լրագրողական շրջանակների ներկայացուցիչներին: Քաղաքական զարգացումները մեր տարածաշրջանում հաճախ տեղի են ունենում այնքան արագ ու սրընթաց, որ դրանց միշտ պատրաստ պետք է լինել: Այսօրվա թուրքական հասարակությունը փոփոխվող ու դինամիկ զարգացող հասարակություն է: Այդ գործընթացներին տեղյակ լինելու համար, ամեն տեսակի ցնցումներից եւ կատակլիզմներից մեր պետությունն ու ժողովրդին հեռու պահելու համար պետք է ներկա լինել Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում: Մի բան, որին կարծես այսօրվա Թուրքիայում առանձնապես չեն խոչընդոտում: Հայ-թուրքական պաշտոնական երկխոսության սառեցման եւ դադարեցման հանգամանքները քաջ հայտնի են, եւ մեր հասարակության մեջ լիակատար ըմբռնում կա, որ այդ երկխոսությունը կարող է վերականգնվել միայն առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ հաստատելու եւ սահմանները վերաբացելու դեպքում: Ոչ ֆորմալ հասարակական երկխոսությունը շարունակելու հիմքում ընկած է թուրքական հասարակության սեփական պատմության հետ հաշտվելու եւ ժամանակակից աշխարհի քաղաքակիրթ ազգերի շարքում արժանի տեղ գրավելու հնարավորությունը: Սրանք ոչ թե լոկ գեղեցիկ խոսքեր են, այլ բարոյականության, մարդկային հոգեբանության, ինչու չէ, նաեւ արդար քաղաքականության պահանջներ: Այս վերլուծականը կարդացողների մեջ պետք է որ առաջանա այս զգայուն հարցերի նկատմամբ սեփական մոտեցումներ ունենալու ցանկություն: Այդ սեփական մոտեցումները պետք է հղկվեն համազգային մակարդակով եւ դրվեն ժամանակակից միջազգային իրավունքի ատյանների առջեւ:

**ԱՐԱՄ ՍԱՓԱՐՅԱՆ**
Քաղաքական վերլուծաբան, բանասիրական գիտությունների թեկնածու

***Սեպտեմբերի 12-ին «Նյու Յորք թայմս» թերթը հրապարակել է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի «Զգուշության կոչ Ռուսաստանից» հոդվածը, որը նվիրված է Սիրիայի իրադարձություններին:***

# «Զգուշության կոչ Ռուսաստանից»

*Պուտինի հոդվածը «Նյու Յորք թայմսում»*

Պուտինը մասնավորապես հայտարարում է, որ Սիրիայի հակամարտության մեջ Մոսկվան ոչ թե պաշտպանում է Բաշար Ասադի վարչակարգը, այլ հանդես է գալիս միջազգային իրավունքի նորմերի պահպանման օգտին:

Նախագահի խոսքերով՝ Ռուսաստանը հետեւողականորեն պաշտպանում է խաղաղ երկխոսության գաղափարը, որպեսզի սիրիացիներն իրենք մշակեն երկրի ապագա զարգացման փոխզիջողական մոդելը:



Ինտերֆաքս գործակալությունը մեջբերում է Պուտինի այն խոսքերը, որ վերջին օրերին ի հայտ են եկել հակասիրիական ռազմական գործողությունը շրջանցելու նոր հնարավորություններ: «Ռուսաստանը, միջազգային ընկերակցության բոլոր անդամները պարտավոր են օգտվել քիմիական զինանոցը միջազգային վերահսկողությանը հանձնելու եւ հետագայում ոչնչացնելու Սիրիայի պատրաստակամությունից», ընդգծում է Պուտինը:

Նա մտահոգություն է հայտնում, որ օտար պետությունների ներքին հակամարտություններին ռազմական ուժով միջամտելը սովորական երեւույթ է դարձել ԱՄՆ-ի համար: «Համապատասխանո՞ւմ է դա արդյոք Ամերիկայի երկարաժամկետ շահերին: Ես դրան կասկածում եմ», գրում է ՌԴ նախագահը, ավելացնելով, որ աշխարհում միլիոնավոր մարդիկ սկսել են ԱՄՆ-ը համարել ոչ թե ժողովրդավարության տիպար, այլ բիրտ ուժի վրա հենվող եւ «Մեզ հետ կամ մեր դեմ» կարգախոսով կոալիցիաներ կազմող երկիր:

Միեւնույն ժամանակ Պուտինը ողջունում է Սիրիայի հարցում Ռուսաստանի հետ երկխոսությունը շարունակելու Օբամայի ցանկությունը: «Եթե կարողանանք խուսափել Սիրիայի դեմ ուժի կիրառումից, դա կբարելավի միջազգային մթնոլորտը եւ կամրապնդի փոխադարձ վստահությունը: Դա կդառնա մեր ընդհանուր հաջողությունը եւ համագործակցության նոր դռներ կբացի», նշում է Պուտինը:

Ինչ վերաբերում է օգոստոսի 21-ի քիմիական գրոհին, նա գրում է, որ «բոլոր հիմքերը կան կարծելու, որ զենքը կիրառել է ոչ թե սիրիական բանակը, այլ ընդդիմությունը, որպեսզի հրահրի իր արտասահմանյան հզոր հովանավորների միջամտությունը»:

Պուտինը զգուշացնում է, որ գրոհայինները պատրաստում են եւս մեկ հարձակում, այս անգամ՝ Իսրայելի դեմ:

Հոդվածագիրը ընդգծում է, որ Սիրիայում պատերազմ է մղվում ոչ թե հանուն ժողովրդավարության, այլ հանուն իշխանության: «Այսօր բազմադավանանք երկրում առկա է կառավարության եւ ընդդիմության դիմակայություն: Ժողովրդավարության ջատագովները Սիրիայում այնքան էլ շատ չեն, մինչդեռ ամեն կարգի ծայրահեղականները եւ «Ալ Ղաիդայի» անդամները ընդդիմության շարքերում շատ-շատ են», նշում է նախագահը:

Նա հիշեցնում է, որ ԱՄՆ պետդեպարտամենտը եւս ահաբեկչական կազմակերպություններ է համարում սիրիացի ընդդիմադիրների ճամբարում կռվող «Ջաբհաթ ան Նուսրա» եւ «Իրաքի եւ Լեւանտի իսլամական պետություն» խմբավորումները:

# Եվրոխորհրդարանականները ուզում են, որ Ռուսաստանը հարգի... քան էլ չէ...

Ռուսաստանը պետք է հարգի ԵՄ արեւելյան հարեւանների՝ ԵՄ-ի հետ ասոցիացման համաձայնագրերում ներգրավվելու ընտրության իրավունքը: Այսպիսի հայտարարությամբ բանաձեւ են ընդունել Եվրոպական խորհրդարանի պատգամավորները երեկվա իրենց նիստում:

Ըստ ԵԽ պաշտոնական կայքէջում տեղադրված մամուլի հաղորդագրության՝ խորհրդարանականները մասնավորապես շեշտել են, որ Ռուսաստանը պետք է ձեռնպահ մնա ճնշումներ գործադրելուց, ինչպիսիք էին առեւտրային պատժամիջոցները Ուկրաինայի եւ Մոլդովայի դեմ ու սպառնալիքները Հայաստանին, որոնք տարհամոզում են նրանց ստորագրել կամ նախաստորագրել փաստաթղթեր ԵՄ-ի հետ նոյեմբերին Վիլնյուսում կայանալիք Արեւելյան գործընկերության գագաթաժողովում:

ԵԽ պատգամավորները բանաձեւում դատապարտել են Ռուսաստանի անընդունելի ճնշումները արեւելյան գործընկերների վրա վիլնյուսյան գագաթաժողովին ընդառաջ: Նրանք կոչ են արել հարգել այդ երկրների ինքնիշխան իրավունքը եւ չմիջամտել նրանց ներքին գործերին, ինչը միջազգային իրավունքի պահանջ է: Արեւելյան գործընկերության երկրները, ըստ պատգամավորների, իրավունք ունեն «հարաբերություններ հիմնելու իրենց ընտրությամբ գործընկերների հետ»:

Բանաձեւը մերժում է այն գաղափարը, թե ԵՄ-ի եւ Ռուսաստանի հարաբերությունները Արեւելյան գործընկերության երկրների հետ կարելի է որակել որպես «զրո արդյունքով խաղ»: «Տարածաշրջանի սառեցված հակամարտություններն իր աշխարհաքաղաքական եւ տնտեսական շահերում օգտագործելու փոխարեն Ռուսաստանը պետք է համագործակցի եւ կառուցողական մոտենա տարածաշրջանի տնտեսական ու քաղաքական կայունությանը», ասվում է բանաձեւում:

ԵԽ անդամները արեւելյան գործընկերներին խրախուսել են շարունակել պատրաստությունները վիլնյուսյան գագաթաժողովին ու «չհանձնվել Ռուսաստանի ճնշմանը»: Եվրոպական խորհրդարանը վերահաստատել է իր ամուր աջակցությունը նախաստորագրելու կամ ստորագրելու համաձայնագրեր արեւելյան այն գործընկեր երկրների հետ, որոնք «պատրաստ են եւ ցանկանում են դա անել»:

Նույն բանաձեւում նաեւ Եվրոմիությանն է կոչ արվում պատասխանատվություն ստանձնել պաշտպանելու Արեւելյան գործընկերության երկրներին, որոնք ենթարկվում են Ռուսաստանի «ակնհայտ, մտահոգիչ եւ ահագնացող ճնշումներին»: Խորհրդարանականները դիմել են Եվրոպական հանձնաժողովին եւ Եվրոպական խորհրդին՝ «կոնկրետ ու արդյունավետ միջոցներ» ձեռնարկելու հաջակցություն գործընկեր երկրների՝ իրենց եվրոպական ձգտումներում եւ ընտրության մեջ:

Բանաձեւի հիմքում ընկած են այն մոտեցումները, որ վերջին շրջանում Ռուսաստանը արգելափակել է ներմուծումը ուկրաինական զգալի ապրանքների համար, արգելել մոլդովական գինու եւ սպիրտի մուտքը, Հայաստանն էլ հայտարարել է Մաքսային միությանը միանալու մասին, ինչն անհամատեղելի է Խոր եւ համապարփակ ազատ առեւտրի համաձայնագրի հետ: Հայաստանի հետ իրավիճակն էլ, ըստ խորհրդարանականների, Ռուսաստանի կողմից անվտանգության հարցերում սպառնալիքների արդյունք էր:

Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՍԻՐԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄ

# Դեպի Սիրիա է շարժվում եւս երկու ռուսական ռազմանավ



**ՌԴ Սեւծովյան նավատորմի «Սմետլիվի» պահականավը սեպտեմբերի 12-ին դուրս է եկել Սեւաստոպոլի ռազմակայանից եւ ուղղություն վերցրել դեպի Սիրիա: Այդ մասին հաղորդում է Ինտերֆաքս գործակալությունը, վկայակոչելով ռազմադիվանագիտական աղբյուր:**

**«Պահականավը սեւծովյան նեղուցները կանցնի «Նիկոլայ Ֆիլչենկով» դեսանտային մեծ նավի հետ, որը նախօրեին դուրս էր եկել Նովոռոսիյսկից: Սեւծովյան նավատորմի ռազմանավերը Սիրիայի ափերի մոտ մարտական խնդիրներ կկատարեն ըստ ծովուժի օպերատիվ հրամանատարության ծրագրի», հայտարարել է նույն աղբյուրը:**

**Ավելի վաղ՝ սեպտեմբերի 10-ին, Ջիբրալթարի նեղուցով անցել էր «Մոսկվա» հրթիռակիր հածանավը, որը նույնպես շարժվում է դեպի Արեւելյան Միջերկրածով: Ենթադրվում է, որ նավը Սիրիայի ափերին կմոտենա սեպտեմբերի 17-ին:**

**ՌԻԱ գործակալության տվյալներով՝ Միջերկրական ծովում ռուսական ծովուժի միավորումը ներառում է «Պերեսվետ», «Ադմիրալ Նեւելսկոյ», «Մինսկ», «Նովոչերկասսկ», «Ալեքսանդր Շաբալին» դեսանտային մեծ նավերը, «Ադմիրալ Պանտելեեւ» հակասուզանավային մեծ ռազմանավը եւ «Նեուստրաշիմի» պահականավը:**

**Սեպտեմբերի 29-ին Սիրիայի ափերին կմոտենան Սեւծովյան նավատորմի «Իվանովեց» հրթիռակիր մոտորանավը եւ «Շտիլ» հրթիռակիր փոքր նավը: Ծովուժի գլխավոր շտաբում ընդգծում են, որ ռուսաստանցի նավաստիների հիմնական խնդիրը կլինի ոչ թե ռազմական գործողություններին մասնակցելը, այլ մարդկանց փրկելը եւ վիրավորներին օգնելը:**

# Ներգաղթյալներն ամենից շատ են ԱՄՆ-ում եւ ՌԴ-ում

*Հրապարակվել է ՄԱԿ-ի զեկուցագիր*



**ՄԱԿ-ի տնտեսական ու սոցիալական հարցերի վարչության ազգաբնակչության բաժինը հրապարակել է նոր զեկուցագիր աշխարհում ներգաղթյալների թվի վերաբերյալ:**

**Կազմակերպության կայքէջը հաղորդում է, որ գաղթյալների թվի ամենաարագ աճը նկատվում է Ասիայում, իսկ ԱՄՆ-ը մնում է ժամանակավոր աշխատանք փնտրողների համար ամենից գրավիչ երկիրը: Հրապարակված փաստաթղթում նշվում է, որ գաղթյալների (միգրանտների) թիվը հասնում է 232 միլիոնի, որ կազմում է աշխարհի բնակչության 3,2 տոկոսը:**

**Զեկուցագրի տվյալներով՝ Եվրոպայում կա 72 մլն, Ասիայում՝ 71 մլն գաղթյալ: Աշխարհում ամենամեծ թվով գաղթյալներ ընդունած 10 երկրներն են ԱՄՆ-ը (45,8 մլն), Ռուսաստանը (11 մլն), Գերմանիան (9,8 մլն), Սաուդյան Արաբիան (9,1 մլն), ԱՄԷ-ն (7,8 մլն), Մեծ Բրիտանիան (7,8 մլն), Ֆրանսիան (7,4 մլն), Կանադան (7,3 մլն), Ավստրալիան (6,5 մլն) եւ Իսպանիան (6,5 մլն):**

**Փաստաթուղթը պատրաստվել է ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովի 68-րդ նստաշրջանի շրջանակներում հոկտեմբերի 3-4-ը կայանալիք Գաղթի եւ զարգացման համաժողովի նախօրեին: Զեկուցագիրը ընդգծում է, որ գաղթյալների ամենամեծ հոսքերն արձանագրվում են Մեքսիկա-ԱՄՆ սահմանի վրա:**

**2012-ին պաշտոնապես Ռուսաստան մուտք գործած 15,88 մլն գաղթյալների մեջ աշխատանքի թույլտվություն ստացել է 1,34 մլն մարդ:**

**2013-ի առաջին կիսամյակում երկիր է մուտք գործել 10 մլն գաղթյալ: Ներգաղթը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 12 տոկոսով (4 տարում՝ 37 տոկոսով): ՌԴ-ում մշտապես ապրում է 800 հազար օտարերկրացի: 2013-ին ՌԴ-ում անօրինական կարգով մնացող ավելի քան 3 մլն անձանցից 900 հազարը Ուզբեկստանի քաղաքացիներ են, 500 հազարը՝ Ուկրաինայի, 400 հազարը՝ Տաջիկստանի եւ այլն:**

**ՌԴ իրավապահ մարմինների տվյալներով՝ Մոսկվայում հանցագործությունների 1/5-ը կատարում են եկվորները, որոնք նաեւ տարածում են արմատական իսլամի գաղափարներ:**

**2015 թ. հունվարի 1-ից ԱՊՀ երկրների քաղաքացիները (բացի Մաքսային միության անդամներից) Ռուսաստան մուտք կգործեն արտասահմանյան անձնագրերով:**

Պ. Ք.

# ՀՊՄՀ բարձրագույն պարգեւ՝ Հովհաննես Չիլինգիրյանին

«Տոն է այսօր Մանկավարժական համալսարանում. ոչ թե հյուրընկալվել, այլեւ «տուն է վերադարձել» Ռուբեն Սեւակը»-Կուլտուրայի ֆակուլտետի մեծ դահլիճում կայացած միջոցառման ընթացքում նշեց Հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Սուրեն Դանիելյանը՝ նկատի ունենալով օրերս Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքում բացված հայ մեծանուն բանաստեղծ, արձակագիր եւ բժիշկ Ռուբեն Սեւակի թանգարանը:



Անդրադառնալով գրողի ստեղծագործական ժառանգությանը՝ գրականագետը նկատեց. «Իր սիրերգությամբ, ստեղծագործական ավյունով, ազգային մտածողությամբ, ներուժով ու հզորներին ձեռնոց նետելու կամքի զորությամբ նա իսկական կամուրջ է երիտասարդների համար: Ռուբեն Սեւակը մրցեց իր ժամանակի ականավոր գրողների հետ, եւ՝ ոչ կքած. նա քնարականության եւ լիրիկականության միջեւ բերեց յուրատեսակ դաշինք, որը մինչ օրս չի հաջողվել ոչ մի ուրիշ բանաստեղծի»:

Թանգարանի բացման առթիվ Հայաստան ժամանած հայտնի բարերար, Ռուբեն Սեւակի եղբորորդի Հովհաննես Չիլինգիրյանը, նրա ընտանիքի անդամներն ու սփյուռքահայ գործարար Հակոբ Ավագյանը, արեւմտահայ գրականության եւ մշակույթի մի շարք գործիչներ այսօր Մանկավարժական համալսարանում էին:

Միջոցառման ընթացքում ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը Հովհաննես Չիլինգիրյանին շնորհեց բուհի բարձրագույն պարգեւ՝ «Խաչատուր Աբովյան» մեդալ:

Ռեկտորը շնորհակալություն հայտնեց Հովհաննես Չիլինգիրյանին, ով ապրելով Ֆրանսիայում, իր միջոցներով ստեղծեց եւ հայրենիք տեղափոխեց գրողի ստեղծագործական հավաքածուն, մասունքներ, կարեւոր նշանակության փաստաթղթեր. «Խիզախումներ լինում են ոչ միայն որոշակի պատմական դժվարին տարիներին. լինում են հերոսական դրսեւորումներ նաեւ խաղաղ ժամանակաշրջանում: Հովհաննես Չիլինգիրյանի գործունեությունը ազգային խիզախության, հզոր զգացմունքների դրսեւորում է, որի պսակը հանդիսացավ թանգարանի բացումը»:

«Երիտասարդ, հաջողակ, փայլուն, ճանաչված, սիրված բժիշկ եւ բանաստեղծ. մարդ, ով միայն չկրոնափոխվելու համար ընտրեց մահվան ուղին: Գրականությունից հայտնի են նման հերոսներ, բայց սա բացառիկ դեպք է. յուրաքանչյուր բան փաստված ու հաստատված է փաստաթղթով»,-նշեց Ռուբեն Միրզախանյանն ու հավելեց՝ բուհը կանի հնարավոր ամեն բան, որ թանգարանը այցելուների համար դառնա գիտական, ուսումնական, կրթական կարեւորագույն կենտրոն:

Հովհաննես Չիլինգիրյանը շնորհակալություն հայտնեց մեծ լուսավորչի անունը կրող մեդալին արժանացնելու համար՝ նշելով, որ երկար տարիների իր աշխատանքը նպատակ ուներ հայ ժողովրդին փոխանցել գրողի զոհաբերության ոգին. Ռուբեն Սեւակի հիշատակի տունը վերածվեց նրա անունը կրող թանգարանի:

«Ռուբեն Սեւակը հայ ազգի ողբերգական պատմության հավաքական դիմագիծն է՝ գրական իր ժառանգությամբ, ողբերգական կյանքով, գաղափարներով», արեւմտահայ գրողին այսպես ներկայացրեց գրականագետ, ազգային գործիչ Երվանդ Ազատյանը: Վերջինս բարձր գնահատեց Հովհաննես Չիլինգիրյանի գործունեությունը՝ նշելով. «Հայ արվեստի եւ ժառանգության գանձատունը մեր երկիրն է. շնորհակալ ենք այս գիտակցությամբ առաջնորդվելու եւ Ռուբեն Սեւակի թանգարանը հայրենիք տեղափոխելու համար»: Նա հույս հայտնեց, որ թանգարանի տեղափոխումը հայրենիք կնպաստի արեւմտահայ գրականության փառքի, համազգային պատվանդանի վրա կդնի նրանց անունները, ովքեր հանճարեղ գործեր են նվիրել հայոց գրականության գանձարանին:

Գրականագետը ուրախությամբ նկատեց՝ Մանկավարժական համալսարանում գործող սփյուռքահայ գրականության ամբիոնն իր գործունեությամբ նվիրվել է արեւմտահայ գրականությանն ու համազգային դիմագիծ կերտելուն:

«Վասն հայրենյաց դու մեռար եւ շատ ապրեցար», -իր ելույթում նշեց բուհի Հայ հին եւ միջնադարյան գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Աելիտա Դոլուխանյանը եւ ավելացրեց. «Ազգային մտածողությունը ճիշտ սերմանելու կարիք ունենք: Վստահ եմ՝ Ռուբեն Սեւակի թանգարանը կդառնա յուրօրինակ ուխտատեղի, դպրոց եւ կվարժեցնի մեզ սիրել հայրենիքն այնպես, ինչպես սիրել է հենց ինքը»:

Ռուբեն Սեւակին նվիրված միջոցառման ընթացքում ելույթներով հանդես եկան գրող, հրապարակախոս Ալեքսանդր Թոփչյանը, դերասանուհի, գրող Անահիտ Թոփչյանը, սփյուռքահայ գրականության գիտակ Կամո Տեր-Պետրոսյանը, բուհի ուսանողները:

# «Կարին» ավանդական երգի-պարի խումբը ելույթ կունենա Հոլանդիայում

Հայաստանի Հանրապետության անկախության օրվա առթիվ սեպտեմբերի 17-ից 25-ը «Կարին» ավանդական երգի-պարի խումբը ելույթ կունենա Հոլանդիայի մի քանի քաղաքներում՝ տեղի հայ համայնքների եւ եվրոպացի հանդիսատեսի առջեւ:

Այցը նախաձեռնել է Հոլանդիայում Հայաստանի դեսպանությունը՝ դեսպան Ձյունիկ Աղաջանյանի գլխավորությամբ: Այցի նպատակն է՝ սեպտեմբերի 21-ի Հայաստանի անկախության օրվա կապակցությամբ եւս մեկ անգամ վերահաստատել Հոլանդիայում բնակվող հայերի կապը հայրենիքի հետ՝ ազգային երգի եւ պարի միջոցով:

Ըստ խմբի գեղարվեստական ղեկավար Գագիկ Գինոսյանի՝ այս ելույթներով «Կարին»-ն առիթ կունենա ազգային երգ ու պարով եվրոպացի հանդիսատեսին ներկայացնելու այն հարուստ ու բազմամյա մշակույթը, որի կրողն է հայ ժողովուրդը:

Մոտ մեկ շաբաթ տեւող այցի ընթացքում «Կարին»-ը սեպտեմբերի 19ին ելույթ կունենա Ալմելոյում, 21ին՝ Մաաստրիխտում եւ 24-ին՝ Հաագայում:

ԲԱՑՈՒՄ

# Բացվեց Հրանտ Մաթեւոսյանի արձանը

**Երեւանի քաղաքապետի նախաձեռնությամբ մայրաքաղաքի Հրանտ Մաթեւոսյանի անվան դպրոցի բակում երեկ հանդիսավորությամբ բացվեց հայ մեծանուն գրող, հրապարակախոսի արձանը: Քանդակի հանդիսավոր բացման պատիվը վերապահվել է Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանին եւ Հրանտ Մաթեւոսյանի որդուն՝ Դավիթ Մաթեւոսյանին: Արձանի հեղինակը ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, քանդակագործ Արտաշես Հովսեփյանն է:**



**Օրվա խորհրդի շրջանակում կազմակերպված միջոցառմանը ներկա էին նաեւ մեծ գրողի ընտանիքի անդամներն ու նրա արվեստը գնահատող բազմաթիվ հյուրեր:**

**Ներկաներին ուղղված իր ողջույնի խոսքում Երեւանի քաղաքապետի տեղակալ Արամ Սուքիասյանն ընդգծեց, որ մեծն արձակագրի անունը կրող դպրոցի բակում ազգային էության ու կեցվածքի խորհրդանիշ դարձած Հրանտ Մաթեւոսյանի արձան ունենալն ուղղակի անհրաժեշտություն էր. «Շատ ուրախ ենք, որ այսօրինակ, այն էլ հեղինակավոր քանդակագործ Արտաշես Հովսեփյանի այս գործը այսօր տեղադրվում է դպրոցի բակում: Նաեւ անհրաժեշտություն էր, որ Հրանտ Մաթեւոսյանի որակի, հատկանիշների, ազգային էության ու կեցվածքի խորհրդանշումը քանդակի տեսքով լիներ դպրոցի բակում, այդպիսով մնալով որպես մեզ անընդհատ հուշող, շարունակ հորդորող ու ճանապարհ ցույց տվող խորհրդանիշ: Հրանտ Մաթեւոսյանի մեծությունը, նախ եւ առաջ չափվում է իր ստեղծագործություններով ու նաեւ համաշխարհային իր կշռով: Բայց նաեւ մենք օրինակ ունենք վերցնելու մտավորականի կեցվածքից, դրսեւորումներից եւ, իհարկե, իր յուրօրինակ տեսակից»,- ընդգծեց Արամ Սուքիասյանը:**

**Քաղաքապետ Տարոն Մարգարյանը՝ դպրոցի փոքրիկ սաների ուղեկցությամբ, ծանոթացել է նաեւ ինչպես բակում ցուցադրված, այնպես էլ դպրոցի շենքում առկա մաթեւոսյանական շնչով լեցուն նկարներին եւ հայկական ավանդական ցուցանմուշներին:**

*Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչություն*

# Նախագահի հրամանագրով Յուրի Բաշմետը պարգեւատրվել է Պատվո շքանշանով

**Հայ-ռուսական մշակութային կապերի ամրապնդման եւ զարգացման գործում ներդրած ավանդի, համաշխարհային երաժշտարվեստի բնագավառում ունեցած մեծ վաստակի համար «Մոսկվայի մենակատարներ» կամերային նվագախմբի եւ «Նոր Ռուսաստան» սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Յուրի Բաշմետը (ՌԴ) պարգեւատրվել է Պատվո շքանշանով: Տեղեկացնում է ՀՀ նախագահի աշխատակազմի հասարակայնության եւ տեղեկատվության միջոցների հետ կապերի վարչությունից:**

# Վահագն Թուրգությանի համերգը Չինաստանում

**Լոս Անջելեսում բնակվող կիթառահար եւ կոմպոզիտոր Վահագն Թուրգությանը, որը հայտնի է իր «Վահագնի» տրիոյով, առաջիկա օրերին համերգով հանդես կգա Չինաստանի ամենախոշոր քաղաքներում՝ Պեկինում եւ Շանհայում: Վահագնը նաեւ վարպետության դասով հանդես կգա չինացի կիթառահարների համար: «Վահագնի» տրիոյի կազմում են խմբի հիմնադիր կիթառահար Վահագն Թուրգությանը, թավջութակահար եւ բաս-վոկալիստ Արտյոմ Մանուկյանը, հարվածային գործիքների վրա նվագող Գեվին Սալմոն: Համերգը տեղի կունենա Պեկինի «The One Club» եւ Շանհայի «Qianshuiwan» արվեստի կենտրոններում: Շանհայում տրիոյի ելույթի ընթացքում, նույն արվեստի կենտրոնի մեկ այլ բեմում ելույթ կունենա ամերիկացի ջազ-երգիչ Բոբբի Մակֆերրինը:**


K²в²оафр ²´амЪ²ЬЖ ²Ьм²Ь Р²ЪО²О²Ь дºо²О²Ь Ш²ЬО²м²рД²О²Ь Р²Ш²Ик²р²ЬА Р²Ъо²р²рафШ ¾ ШртафЪВ В²цафр ²ЮК²о²оºФЖ Р²Ш²р

Համալսարանի **գերմանական լեզուների ամբիոնի** - մասնագետի տեղի համար հետեւյալ գործառույթներով եւ հմտություններով.

▼ կատարել ամբիոնի վարիչի հանձնարարականները

▼ տիրապետել համակարգչային գիտելիքների եւ առնվազն մեկ օտար լեզվի:

Հավակնորդները անձնակազմի հաշվառման բաժին են ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը՝

- Դիմում ռեկտորի անունով
- Ինքնակենսագրություն
- Կրթությունը հավաստող փաստաթղթերի պատճենները
- Անձնագրի պատճենը
- Լուսանկար 1 հատ
- Աշխատանքային գրքույկի պատճենը:

-Փաստաթղթերի ներկայացման ժամկետը մինչեւ ս.թ. սեպտեմբերի 23-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել անձնակազմի հաշվառման բաժին

հասցեն՝ ք. Երեւան, Տիգրան Մեծի 17, 200 սենյակ,

հեռ՝ 59-70-84:

# Հայ բազկամարտիկների հարուստ ավարը

## *Նրանցից երկուսն աշխարհի չեմպիոն հռչակվեցին*

Լեհաստանի Գդինիա քաղաքում անցկացված բազկամարտի աշխարհի առաջնությունում հաջող ելույթներ ունեցան հայ բազկամարտիկները՝ նվաճելով 2-ական ոսկե, արծաթե եւ բրոնզե մեդալ:

Մեծահասակների մրցաշարում Վլադիմիր Մնացականյանն ուժեղագույնը ճանաչվեց մինչեւ 80 կգ քաշային կարգում՝ հաղթելով բոլոր մրցակիցներին ձախ ձեռքով մրցաձեւում: Հայաստանին 2-րդ ոսկե մեդալը պարգեւեց երիտասարդների մրցաշարին մասնակցած Աշոտ Ադամյանը, որն աջ ձեռքով մրցաձեւում հաղթող ճանաչվեց մինչեւ 60 կգ քաշայինների մրցավեճում: Հատկանշական է, որ չեմպիոն հռչակված մեր 2 բազկամարտիկներն էլ եզրափակիչում պարտության մատնեցին ադրբեջանցի մարզիկներին: Ի դեպ, Աշոտը մրցանակակիր դարձավ նաեւ ձախ ձեռքով մրցաձեւում՝ գրավելով 2-րդ տեղը:



*Վլադիմիր Մնացականյանը (աջից )մրցման պահին*

Արծաթե 2-րդ մեդալը մեր հավաքականի կազմում նվաճեց մինչեւ 18 տարեկան պատանիների մրցումների մասնակից Դավիթ Ստեփանյանը՝ ուժերը չափելով ձախ ձեռքով մրցավեճում մինչեւ 65 կգ քաշային կարգում: Դավիթը մեկ բրոնզե մեդալ էլ նվաճեց աջ ձեռքով մրցումներում: Բրոնզե մյուս պարգեւին արժանացավ մինչեւ 100 կգ քաշային Արմեն Չապուխյանը՝ մասնակցելով աջ ձեռքով մեծահասակների մրցումներին: Ի դեպ, ըստ բազկամարտի ՀՀ ֆեդերացիայի նախագահ Արսեն Գաբրիելյանի, Արմեն Չապուխյանը մրցավարների կողմից սխալի պատճառով զրկվեց չեմպիոնության համար պայքարելու հնարավորությունից: Մեր պատվիրակությունն այդ փաստի առիթով բողոք է ներկայացրել, սակայն մրցումների կազմկոմիտեն այն մերժել է:

# Հեյը երազում է նվաճել բոլոր գոտիները



Քաշային 2 կարգերում պրոֆեսիոնալ բռնցքամարտի աշխարհի նախկին չեմպիոն Դեւիդ Հեյը կցանկանար կարիերան ավարտել աշխարհի բացարձակ չեմպիոնի տիտղոսը նվաճած:

«Որոշել էի բռնցքամարտին հրաժեշտ տալ 30 տարեկանում, սակայն դա տեղի չունեցավ: Ուզում եմ հավատալ, որ դեռ կպայքարեմ աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար եւ կարիերաս կավարտեմ գերծանրքաշային կարգում աշխարհի բացարձակ չեմպիոնի կարգավիճակով», հայտարարել է Հեյը:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 28-ին Հեյը ռինգ դուրս կգա իր հայրենակից Թայսոն Ֆյուրիի հետ մենամարտում: Նշենք, որ գերծանրքաշային կարգում ներկայումս չեմպիոնական գոտիներից մեկը պատկանում է ռուսաստանցի Ալեքսանդր Պովետկինին, իսկ մնացածը Կլիչկո եղբայրներինն է:

# Կուբացի ձյուդոյիստը հրաժարվել էր կաշառքից

**Վերջերս Ռիո դե Ժանեյրոյում կայացած ձյուդոյի աշխարհի առաջնությունում հաղթող դարձած կուբացի Էսլեյ Գոնսալեսը (90 կգ) խոստովանել է, որ եզրափակիչում վրացի Վառլամ Լիպարտելիանիին պարտվելու դիմաց իրեն 15-20 հազար դոլար են առաջարկել: Սակայն կուբացի ձյուդոյիստը հրաժարվել է:**

**«Ինձ ցույց տվեցին այդ թվերը բջջային հեռախոսի էկրանի վրա, սակայն ես միանգամից հրաժարվեցի: Երազում էի աշխարհի առաջնությունում հաղթելու մասին: Բացի այդ, չէի կարող հիասթափեցնել երկրիս եւ ազգիս: Հեղափոխական գաղափարներն ավելի բարձր են դասում պատիվն ու արժանապատվությունը, քան նյութական բարիքները», հայտարարել է Գոնսալեսը:**

# «Ադիդասը» Բեյլի ազգանունով մարզաշապիկներ կվաճառի

**«Ադիդաս» հանրահայտ ընկերությունը նախատեսել է օրերս Մադրիդի «Ռեալ» տեղափոխված Գարեթ Բեյլի ազգանունով մոտ 40 հազար մարզաշապիկ վաճառել: Ուելսի հավաքականի ֆուտբոլիստի մարզաշապիկը կվաճառվի «Ադիդասի» պաշտոնական խանութներում, որոնք սփռված են աշխարհի տարբեր երկրներում: Մարզաշապիկի գինը մոտ 86 եվրո կկազմի:**

**Հիշեցնենք, որ Գարեթ Բեյլը 100 մլն եվրոյի դիմաց է տեղափոխվել Մադրիդի «Ռեալ»: Դա համաշխարհային ֆուտբոլում իրականացված ամենաթանկ տրանսֆերն է: Մինչ այդ ռեկորդային էր համարվում Քրիշտիանու Ռոնալդուի տրանսֆերը: Նրա տեղափոխության համար ժամանակին «Ռեալը» «Մանչեսթր Յունայթեդին» 94 մլն եվրո էր վճարել:**

**Ի դեպ, «Ռեալը» տրանսֆերային ամռան շրջանում ֆուտբոլիստների վաճառքից 111,5 մլն եվրո է վաստակել, ինչն ակումբի պատմության մեջ ռեկորդային ցուցանիշ է:**

# «Յուվենտուսը» չի բաժանվի Պիռլոյից

**Թուրինի «Յուվենտուսի» ղեկավարությունը մտադիր չէ բաժանվել թիմի կիսապաշտպան Անդրեա Պիռլոյից: Ուստի արդեն տարեվերջին նրան նոր պայմանագիր կառաջարկվի, թեեւ գործող պայմանագրի ժամկետն ավարտվում է հաջորդ տարվա հունիսին: 34-ամյա ֆուտբոլիստը «Յուվենտուս» է տեղափոխվել 2011-ին «Միլանից»:**

# Սանկտ Պետերբուրգը Եվրո-2020-ի թեկնածու քաղաքների թվում է

**Ռուսաստանի ֆուտբոլային միության փոխնախագահ Նիկիտա Սիմոնյանը հաստատել է, որ Սանկտ Պետերբուրգը կառաջադրվի որպես ֆուտբոլի 2020-ի Եվրոպայի առաջնության անցկացման մրցավայր քաղաքներից մեկը: Սանկտ Պետերբուրգը ցանկանում է 4 խաղ անցկացնել, որից 3-ը՝ խմբային մրցաշարում, մեկը՝ քառորդ եզրափակիչում:**

**Նշենք, որ Միշել Պլատինիի նախաձեռնությամբ Եվրո-2020-ը պետք է անցկացվի եվրոպական 13 քաղաքներում: Դրանց ցանկը վերջնականապես կհաստատվի սեպտեմբերի 19-20-ը Խորվաթիայի Դուբրովնիկ քաղաքում կայանալիք ՈւԵՖԱ-ի գործկոմի նիստում:**

### ՇԱԽՄԱՏ

# Արոնյանը կրկին ոչ-ոքի խաղաց

**Սենթ Լուիսի շախմատի մրցաշարում Լեւոն Արոնյանին առայժմ չի հաջողվում հաղթանակ տոնել: 3-րդ տուրում Լեւոնը հաշտություն կնքեց մինչ այդ 2 պարտություն կրած Գասա Կամսկու հետ: Ոչ-ոքի ավարտվեց նաեւ Մագնուս Կառլսենի եւ Հիկարու Նակամուրայի պարտիան:**

**3 տուրից հետո առաջատարը 2,5 միավոր ունեցող Հիկարու Նակամուրան է: Կառլսենն ունի 2 միավոր, Արոնյանը՝ 1: Կես միավորով աղյուսակը եզրափակում է Գասա Կամսկին:**

**3-րդ տուրի հանդիպումներով ավարտվեց մրցաշարի 1-ին շրջանը: Մեկօրյա հանգստից հետո այսօր շախմատիստները կանցկացնեն 4-րդ տուրի պարտիաները: Արոնյանը սպիտակներով մրցելու է Նակամուրայի հետ, որին մեկնարկային տուրում պարտվել էր:**

# Փաշիկյանն առաջին պարտությունը կրեց

**Մարտունիում ընթացող շախմատի մրցաշարի 4-րդ տուրն ընդհանուր առմամբ այնքան էլ հաջող չդասավորվեց հայ շախմատիստների համար: Հաջողության հասավ միայն Կարեն Գրիգորյանը, որը հաղթելով Սերգեյ Ժիգալկոյին, 3 միավորով հավասարվեց աղյուսակը գլխավորող Արման Փաշիկյանին եւ Յուրի Կուզուբովին:**

**Տուրն անհաջող էր միանձնյա առաջատար Փաշիկյանի համար, որը 3 անընդմեջ հաղթանակներից հետո առաջին պարտությունը կրեց Յուրի Կուզուբովի հետ մրցավեճում:**

**Պարտվեցին նաեւ Ռոբերտ Հովհաննիսյանն ու Ավետիք Գրիգորյանը, որոնք մրցում էին համապատասխանաբար Իվան Պոպովի եւ Դարիուշ Սվիերչի հետ: Զավեն Անդրեասյանը ոչ-ոքի խաղաց Մարկուս Ռագերի հետ: Գրիգորյանն ու Անդրեասյանը վաստակել են 1-ական միավոր, իսկ Ռոբերտ Հովհաննիսյանը 0,5 միավորով եզրափակում է աղյուսակը:**

# Գաբրիել Սարգսյանի թիմի առաջին հաղթանակը

**Իսպանիայի շախմատի թիմային առաջնության 4-րդ տուրում «Էքստրեմադուրան» առաջին հաղթանակը տարավ՝ 5-1 հաշվով առավելության հասնելով «Էսկոլայի» նկատմամբ: Առաջին խաղատախտակի վրա Գաբրիել Սարգսյանը հաշտություն կնքեց Քեւին Սպրագեթի հետ:**

**Այս հաղթանակից հետո «Էքստրեմադուրան» վաստակած 3 միավորով 8 թիմերի մրցավեճում զբաղեցնում է 6-րդ տեղը: Առաջատարը 8 միավորով «Սոլվայն» է, որը 4-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ 4-2 հաշվով պարտության մատնելով «Սեստաոյին»:**

# Հայկ Գալստյանի տեղափոխությունն «Ատլետիկո» ձգձգվում է

**Ինչպես հայտնի է, «Միկայի» պատանի ֆուտբոլիստ Հայկ Գալստյանը հունիսին հաջող փորձաշրջան էր անցել Մադրիդի «Ատլետիկոյի» պատանեկան թիմում: Սպասվում էր, որ օգոստոսին Հայկը կտեղափոխվի Իսպանիա, սակայն «Ատլետիկոյի» ղեկավարությունը խնդրել է ֆուտբոլիստին մի փոքր սպասել: Քանի որ Հայկը դեռեւս անչափահաս է, ուստի փաստաթղթային հարցերը լուծելն այնքան էլ հեշտ չէ: Ծնողներից մեկը Հայկի հետ պետք է մեկնի Իսպանիա:**

**Հայկ Գալստյանը «Միկայի» հետ պայմանագիր ունի մինչեւ 2014-ը եւ տեղափոխության դեպքում «Ատլետիկոն» պետք է փոխհատուցում վճարի հայկական ակումբին:**

# Մեսին աշխատավարձի բարձրացում կպահանջի



**Լիոնել Մեսին ցանկանում է նոր պայմանագիր կնքել «Բարսելոնի» հետ, որպեսզի ավելի բարձր աշխատավարձ ստանա: Ներկայումս նրա տարեկան աշխատավարձը 10,5 մլն եվրո է գումարած նաեւ 3 մլն եվրո պարգեւավճարը: Նախորդ մրցաշրջանում Մեսին 11,4 մլն եվրո է վաստակել «Բարսելոնում»:**

**Ամռանը «Բարսելոն» տեղափոխված բրազիլացի Նեյմարի աշխատավարձը 17 մլն եվրո է, իսկ Քրիշտիանու Ռոնալդուն «Ռեալում» 18 մլն եվրո է ստանում: Այնպես որ Մեսին «Բարսելոնից» 18 մլն եվրոյից ոչ պակաս աշխատավարձ կպահանջի:**

# Ուշենինան ու Յիֆանը հաշտություն կնքեցին

**Աննա Ուշենինայի եւ Հոու Յիֆանի միջեւ անցկացվող շախմատի աշխարհի կանանց առաջնության եզրափակիչ մրցախաղի 2-րդ պարտիան ավարտվել է ոչ-ոքի: Մրցակցուհիները հաշտություն կնքեցին 33-րդ քայլին: Յիֆանը մրցախաղը տանում է 1,5-0,5 հաշվով:**

**Այսօր շախմատիստուհիները կհանգստանան, իսկ վաղը կկայանա մրցամարտի 3-րդ պարտիան, որում սպիտակներով խաղալու է աշխարհի չեմպիոնուհի Աննա Ուշենինան:**

# Ռայկոնենը վերադարձավ «Ֆերարի»

**Ֆինն ավտոմրցարշավորդ Կիմի Ռայկոնենը հաջորդ մրցաշրջանում հանդես կգա իտալական «Ֆերարիում»: Նա կփոխարինի բրազիլացի Ֆելիպե Մասսային, որը մրցաշրջանի ավարտից հետո հեռանալու է թիմից: 33-ամյա Ռայկոնենը 2 տարվա պայմանագիր է կնքել «Ֆերարիի» հետ, որի կազմում հանդես է եկել 2007-2009-ին: Նրա նորամուտը «Ֆերարիում» շատ հաջող ստացվեց: Ռայկոնենը 2007-ին դարձավ «Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի չեմպիոն:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀԱՍՑԵՆ՝ Ք. ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23:

## ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

**ՀՀ կառավարության 2013թ. օգոստոսի 22-ի թիվ 884-Ա որոշմամբ «Երեւանի թիվ 3 բեռնատար ավտոտրանսպորտային» պետական փակ բաժնետիրական ընկերության լուծարումից հետո մնացած մասնավորեցման ենթակա շարժական գույքը**

| N | Գույքի անվանումը | Քանակը | Շահագործման տ/թ. | Գույքի արժեքի որոշման հետ կապված վճարը (ներառյալ ԱԱՀ) /դրամ/ | Գույքի գնահատված մեծությունը 11.06.2013թ դրությամբ /դրամ/ | 18.10.2013թ. աճուրդի գույքի մեկնարկային գինը /դրամ/ | 04.11.2013թ աճուրդի գույքի մեկնարկային գինը /դրամ/ | 19.11.2013թ. աճուրդի գույքի մեկնարկային գինը /դրամ/ | 04.12.2013թ. աճուրդի գույքի մեկնարկային գինը /դրամ/ | 19.12.2013թ. աճուրդի գույքի մեկնարկային գինը /դրամ/ | 08.01.2014թ. աճուրդի գույքի մեկնարկային գինը /դրամ/ | 23.01.2014թ. աճուրդի գույքի մեկնարկային գինը /դրամ/ | 07.02.2014թ. աճուրդի գույքի մեկնարկային գինը /դրամ/ | 24.02.2014թ. աճուրդի գույքի մեկնարկային գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լցավորման տարա | 1 | 1982թ. | 600 | 250000 | 250000 | 200000 | 160000 | 128000 | 102400 | 81920 | 65536 | 52429 | 41944 |
| 2 | Սառնարան | 1 | 1978թ. | 600 | 6000 | 6000 | 4800 | 3840 | 3072 | 2458 | 1967 | 1574 | 1260 | 1008 |
| 3 | Սառնարան | 1 | 1978թ. | 600 | 6000 | 6000 | 4800 | 3840 | 3072 | 2458 | 1967 | 1574 | 1260 | 1008 |
| 4 | Գրամեքենա «Յատրան» | 1 | 1978 թ. | 600 | 4000 | 4000 | 3200 | 2560 | 2048 | 1639 | 1312 | 1050 | 840 | 672 |
| 5 | Գրամեքենա «Յատրան» | 1 | 1978թ. | 600 | 3000 | 3000 | 2400 | 1920 | 1536 | 1229 | 984 | 788 | 631 | 505 |
| 6 | Դրոշմակնիք ժամացույց | 1 | 1991թ. | 600 | 1000 | 1000 | 800 | 640 | 512 | 410 | 328 | 263 | 211 | 169 |
| 7 | Տաքացուցիչ ԿՎՏ | 1 | 1987թ. | 600 | 4000 | 4000 | 3200 | 2560 | 2048 | 1639 | 1312 | 1050 | 840 | 672 |
| 8 | Սառնարան | 1 | 1982թ. | 600 | 7000 | 7000 | 5600 | 4480 | 3584 | 2868 | 2295 | 1836 | 1469 | 1176 |
| 9 | Ստենդ էլեկտրոստատ. փորձ | 1 | 1978թ. | 600 | 10000 | 10000 | 8000 | 6400 | 5120 | 4096 | 3277 | 2622 | 2098 | 1679 |
| 10 | Ավտոտրենաժոր | 1 | 1986թ. | 600 | 7000 | 7000 | 5600 | 4480 | 3584 | 2868 | 2295 | 1836 | 1469 | 1176 |
| 11 | Ավտոդող քանդող հաստոց | 1 | 1981թ. | 600 | 30000 | 30000 | 24000 | 19200 | 15360 | 12288 | 9831 | 7865 | 6292 | 5034 |
| 12 | Կոմուտատոր | 1 | 1978թ. | 600 | 5000 | 5000 | 4000 | 3200 | 2560 | 2048 | 1639 | 1312 | 1050 | 840 |
| 13 | Բենզալցակայան | 1 | 1987թ. | 600 | 9000 | 9000 | 7200 | 5760 | 4608 | 3687 | 2950 | 2360 | 1888 | 1511 |
| 14 | Բենզալցակայան | 1 | 1994թ. | 600 | 17000 | 17000 | 13600 | 10880 | 8704 | 6964 | 5572 | 4458 | 3567 | 2854 |
| 15 | Սեղանի կոմպլեկտ | 1 | 1998թ. | 600 | 2000 | 2000 | 1600 | 1280 | 1024 | 820 | 656 | 525 | 420 | 336 |
| 16 | Հեռուստացույց | 1 | 1996թ. | 600 | 3000 | 3000 | 2400 | 1920 | 1536 | 1229 | 984 | 788 | 631 | 505 |
| 17 | Տեսաձայնագրիչ | 1 | 1998թ. | 600 | 7000 | 7000 | 5600 | 4480 | 3584 | 2868 | 2295 | 1836 | 1469 | 1176 |
| 18 | Բաշխիչ 2002ՕԳ-52 | 90 | _ | _ | 5850 | 5850 | 4680 | 3744 | 2996 | 2397 | 1918 | 1535 | 1228 | 983 |
| 19 | Արգելակային վերդիր | 282 | _ | _ | 28200 | 28200 | 22560 | 18048 | 14439 | 11552 | 9242 | 7394 | 5916 | 4733 |
| 20 | Շրջանակ 60101 ավիս | 1 | _ | _ | 400 | 400 | 320 | 256 | 205 | 164 | 132 | 106 | 85 | 68 |
| 21 | ԱՓՏ ատամնանիվ ԶԻԼ-130 | 66 | _ | _ | 13530 | 13530 | 10824 | 8660 | 6928 | 5543 | 4435 | 3548 | 2839 | 2272 |

| N | Գույքի անվանումը | 11.03.2014թ. աճուրդի գույքի մեկնարկային գինը /դրամ/ | 26.03.2014թ. աճուրդի գույքի մեկնարկային գինը /դրամ/ | 10.04.2014թ. աճուրդի գույքի մեկնարկային գինը /դրամ/ | 25.04.2014թ. աճուրդի գույքի մեկնարկային գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Լցավորման տարա | 33,556 | 26,845 | 21,476 | 17,181 |
| 2 | Սառնարան | 807 | 646 | 517 | 414 |
| 3 | Սառնարան | 807 | 646 | 517 | 414 |
| 4 | Գրամեքենա «Յատրան» | 538 | 431 | 345 | 276 |
| 5 | Գրամեքենա «Յատրան» | 404 | 324 | 260 | 208 |
| 6 | Դրոշմակնիք ժամացույց | 136 | 109 | 88 | 71 |
| 7 | Տաքացուցիչ ԿՎՏ | 538 | 431 | 345 | 276 |
| 8 | Սառնարան | 941 | 753 | 603 | 483 |
| 9 | Ստենդ էլեկտրոստատ. փորձ | 1,344 | 1,076 | 861 | 689 |
| 10 | Ավտոտրենաժոր | 941 | 753 | 603 | 483 |
| 11 | Ավտոդող քանդող հաստոց | 4,028 | 3,223 | 2,579 | 2,064 |
| 12 | Կոմուտատոր | 672 | 538 | 431 | 345 |
| 13 | Բենզալցակայան | 1,209 | 968 | 775 | 620 |
| 14 | Բենզալցակայան | 2,284 | 1,828 | 1,463 | 1,171 |
| 15 | Սեղանի կոմպլեկտ | 269 | 216 | 173 | 139 |
| 16 | Հեռուստացույց | 404 | 324 | 260 | 208 |
| 17 | Տեսաձայնագրիչ | 941 | 753 | 603 | 483 |
| 18 | Բաշխիչ 2002ՕԳ-52 | 787 | 630 | 504 | 404 |
| 19 | Արգելակային վերդիր | 3,787 | 3,030 | 2,424 | 1,940 |
| 20 | Շրջանակ 60101 ավիս | 55 | 44 | 36 | 29 |
| 21 | ԱՓՏ ատամնանիվ ԶԻԼ-130 | 1,818 | 1,455 | 1,164 | 932 |

***Համաձայն ՀՀ կառավարության 2013թ. օգոստոսի 22-ի թիվ 884-Ա որոշման՝***

***ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետը աճուրդի հաղթողի կողմից առաջարկված գնի , ինչպես նաեւ գույքի արժեքի որոշման համար նախատեսված գումարի (ներառյալ ավելացված արժեքի հարկը) վճարումից հետո մեկամսյա ժամկետում գնորդի հետ կնքում է մասնավորեցման պայմանագիր:***

Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

Բոլոր աճուրդները սկսվում են ժամը 10 :00-ին «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունում (հասցեն՝ ք.Երեւան,Դ.Անհաղթի 23) :

Աճուրդով չվաճառված գույքի մեկնարկային գինը յուրաքանչյուր հաջորդ աճուրդի ժամանակ նվազեցվում է վերջին աճուրդի գույքի մեկնարկային գնի 20 տոկոսի չափով: Տվյալ լոտ(եր)ի աճուրդը կայանալու դեպքում հաջորդ աճուրդ(ներ)ը չի (չեն) անցկացվում:

Աճուրդին կարող են մասնակցել մասնակցության իրավունք ձեռք բերած մասնավորեցման սուբյեկտները կամ նրանց կողմից լիազորված անձինք:

Աճուրդին մասնակցելու իրավունք են ձեռք բերում մասնավորեցման այն սուբյեկտները, որոնք յուրաքանչյուր աճուրդի համար մինչեւ ***աճուրդի բացմանը նախորդող աշխատանքային օրը***, ժամը 17:00 աճուրդային հանձնաժողովին են (հասցեն՝ ք.Երեւան,Դ.Անհաղթի 23) ներկայացրել՝

- աճուրդի մասնակցության հայտը,
- աճուրդի մասնակցության վճարի անդորրագիրը՝ ***առաջին աճուրդի մասնակցության վճարի չափն է՝ 200 դրամ***, մուտքագրման հաշիվն է՝ թիվ 1 տեղական գանձապետական բաժանմունքի աճուրդի մասնակցության նախավճարի դրամային թիվ 900013145025 հաշիվը (յուրաքանչյուր հաջորդ աճուրդի համար աճուրդի նախավճարը հաշվարկվում է տվյալ աճուրդի մեկնարկային գների միջին թվաբանականի 5 տոկոսի չափով, բայց ոչ ավելի քան նվազագույն մեկնարկային գին ունեցող գույքի մեկնարկային գնի 50 տոկոսը),
- իրավաբանական անձինք ներկայացնում են հիմնադիր փաստաթղթերի պատճենները:

Աճուրդի մասնակիցները պետք է ձեռք բերեն աճուրդի մասնակցի տոմս, որի գինն է ***5000 դրամ***,աճուրդի մասնակից չհամարվող անձանց (դիտորդների) տոմսի գինն է ***3000 դրամ***:

Մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է:

Նախքան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին, տրամադրում է քարտ:

Աճուրդը անցկացնում է աճուրդավարը, որը հրապարակում է վաճառվող գույքը բնութագրող ցուցանիշները, գույքի մեկնարկային գինը, աճուրդային քայլի չափը: Աճուրդի մասնակիցը

բարձրացնում է իր տոմսին համապատասխանող համարը, որով տալիս է իր համաձայնությունը հայտարարված գնով գույքը ձեռք բերելու մասին: Յուրաքանչյուր գնորդ կարող է գույքի գինն ավելացնել մեկ կամ մեկից ավելի քայլերով կամ քայլի չափից ոչ պակաս գումարով: Աճուրդավարը աճուրդը շարունակում է այնքան ժամանակ քանի դեռ չի մնացել առավելագույն գին առաջարկած մեկ թեկնածու: Գույքի առավելագույն արժեքն առաջարկած թեկնածուն, աճուրդավարի կողմից առաջարկված գինը 3-րդ անգամ հայտարարելուց հետո, համարվում է աճուրդի հաղթող եւ պարտավոր է 30 րոպեի ընթացքում ներկայացնել մասնակցի տոմսն ու վճարել իր առաջարկած գնի առնվազն 5 տոկոսի չափով գումար եւ ստորագրել աճուրդի մասին արձանագրությունը: Վերը նշված պարտավորությունները չկատարելու դեպքում նրա մուծած մասնակցության վճարը չի վերադարձվում եւ նա զրկվում է աճուրդին մասնակցելու իրավունքից եւ դուրս է հրավիրվում դահլիճից: Այդ դեպքում գույքի աճուրդը վերսկսվում է մեկնարկային գնից:

Աճուրդի մասին արձանագրությունը ստորագրելուց հետո, որպես աճուրդում հաղթող ճանաչված մասնակից, նրան տրվում է վճարման հանձնարարագիր՝ մնացած վճարման ենթակա գումարը սահմանված ժամկետում՝ 10 օրվա ընթացքում վճարելու համար: Սահմանված ժամկետում նշված վճարումը չկատարելու դեպքում իր կողմից վճարած մասնակցության վճարը եւ իր առաջարկված գնի առնվազն 5%-ի չափով գումարը հետ չի վերադարձվում, իսկ աճուրդը համարվում է չկայացած: Վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության արժույթով:

***Աճուրդի մասնակիցները գույքին կարող են ծանոթանալ յուրաքանչյուր աշխատանքային օրերին ժամը 10:00-ից-18:00 ընկած ժամանակահատվածում, ք.Երեւան, Շիրակի 3 նրբ., հ.2 հասցեում: Տեղեկությունների համար զանգահարել 010-42-11-80, 010-42-68-20 հեռախոսահամարներով:***

Լրացուցիչ տեղեկությունների համար (յուրաքանչյուր աճուրդի նախավճարի չափի մասին) կարող եք դիմել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպություն, զանգահարել 23-73-00 հեռախոսահամարով, ինտերնետ՝ URL: URL://www.spm.am:

Հնարավոր փոփոխություններն ու լրացումները կիրապարակվեն այն ձեւով, ինչպես կատարվել է աճուրդի մասին սույն հայտարարությունը:

***Հայաստանի Հանրապետության կառավարությանն***
***առընթեր պետական գույքի կառավարման վարչություն***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 12.9.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: